




Ա Մ Ս Ա Գ Ի Ր


ԱՅԳԱՅԻՆ, ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ, ԳԻՐԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻՐԱՆԵԱՅ



ՅԵՐՈՒՍԱԼԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԼԱՅ

1872



ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏՄԻ
ԹԻՒ 6.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՒՆԻՍ 30.
1872.

ԱՅԳԵՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՊԱՄԲԱԼԱՅ ԳԱՂԱԴԱՐԱՆՈՅ

Ա. ՂՕԹՔ ԵՒ ԽՆԳՐՈՒԱԾՔ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ Ի ԲԱՐԻՆ ԳՈՐԾ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. Ու Տէր, դու որ այնչափ քաղցր
ու բարի ես, այնպէս գթած ու ողոր
մած, որ չէ թէ միայն յաջողութիւն
ներն, այլ և քո ընտրեալներուդ պա
տահած ձախորդութիւններն անգամ
ողորմութեանդ պրտուղներն են, ինչ ևս
չնորհք տուր, որ հեթանոսաբար չը վա
րուիմ այս վիճակիս մէջ, ուր ձգած է
դիս քո արդարութիւնը. այլ ինչ վիճա
կի մէջ որ լինիմ, ճշմարիտ բրիստո
նէի պէս Հայր ճանաչեմ զքեզ ինչ և
Մատուած. վասն զի իմ վիճակի փոխ
խաթիւնը վերաբերութիւն չունի քո

Ե

բնութեան հետ. ես ենթակայ եմ փո
փոխութեան, բայց դու միշտ նոյն ես.
դու Մատուած ես՝ ոչ միայն միտիթա
րած ու ներած ժամանակդ, այլ և վշտա
ցած ու սրտածած ժամանակդ անգամ.
Բ. Դու ինչ աւուրջութիւն տուիր
քեզ ծառայելու համար, բայց ես զայն
գործ դրի աշխարհի անսրբութեանց
համար. Այժմ դու ինչ հիւանդու
թիւն կ'ուղարկես, որ զիս ուղղես. մի
թողուր, Մատուած իմ, որ հիանդու
թեամբս անհամբեր լինիմ և քո բար
կութիւնդ իմ վրայ շարժեմ. Աս չա

բաշար գործածեցի առողջութիւնս, և սորա համար արգարութեամբ պատ-
մեցիր զիս. մի թողուր՝ որ չարաչար
վարեմ քո տուած պատիժը: Եւ ու-
րովհետեւ այնչափ աղակաւնուած է իմ
բնութիւնս, որ քո պարգեւներդ կու-
րատակսն ու վտանգաւոր կ'ընէ ինձ
համար. ուրեմն քո ամենակարող զը-
թութեամբ փրկարար շնէ ինձ համար
քո պատիժները: Եթէ սիրտս իւր զը-
րաւոր և առողջ վիճակին մէջ լցուած
է աշխարհային ցանկութեամբ, ոչնչու-
ցուր այս զօրութիւնը իմ փրկութեան
համար, և խէ իմ ընդունակութիւնս,
որ չկարողանամ աշխարհքը վայելել թէ
թուլութեամբ մարմնոյ և թէ մարդա-
սիրական եռանդեամբ, այնպէս որ բզ-
բեզ միայն կարողանամ վայելել:

Գ. Մտուած իմ, ես՝ որ իմ կենաց
կատարածին և աշխարհի վախճանին
իմ բոլոր գործոցս համար ճիշդ հաշիւ
պէտք է տամ քո առջեւ. Մտուած
իմ, դու՝ որ աշխարհն և աշխարհի ա-
մեն բաները կը սրահարսնես քո ընտ-
րեալները կը թելու կամ մեղաւորները
պատժելու համար. Մտուած իմ, դու՝
որ մեղաւորները աշխարհային հեշտու-
թեանց և անօրէնութեանց մէջ խըւ-
տացած և անդգայացած կը թողուս.
Մտուած իմ, դու՝ որ կը մեռցնես մեր
մարմինը և խիղջն աշխարհի մէջ սիրած
բաներէն կը խլես մեր հոգին. Մտուած
իմ, դու՝ որ այս վերջին րոպէիս կորզե-
լով կը հեռացնես իմ սիրտս այն առար-
կաներէն, որոց մէջ դրած էի զայն և
որոց հետ կապուած էի. Մտուած իմ,
դու՝ որ ի վերջնում աւուր պիտի ծա-
խես և սպառես երկինքն ու երկիրը և
նոցա մէջ եղած ամեն սրաքածները,
որպէս զի յոյց տաս մարդկանց թէ՛ մի-
այն դու ես, որ ես, և միայն դու ես սի-
րոյ արժանի, ժամն զի միայն դու ես ա-
նանց և յաւիտենական. Մտուած իմ,

դու՝ որ պիտի խորտակես մեր կրկն ու-
նայն կուռքերը և ամեն մահառիթ ա-
ռարկաները, գոհութիւն և փառաբա-
նութիւն բեզ, Մտուած իմ, չեմ դա-
դարիր օրհնել զբեզ իմ կենաց բոլոր
օրերուն մէջ, որովհետեւ հաճեցար
դու տկարութիւնս պարգեւել ինձ և
անընդունակ ընել որ չկարողանամ ա-
ռողջութեան հեշտութիւններն ու աշ-
խարհի զուարճութիւնները վայելել:
Եթէ օրհնեմ զբեզ, Մտուած իմ, որ իմ
օգտիս համար կերպով մի ոչնչացուցիր
այն խաբեքայ կուռքերը, զորս ի՛նչա-
խառինս մեղաւորաց բոլորովն պիտի
ջնջես քո բարկութեան աւուր մէջ:
()Գնէ ինձ, Մտուած իմ, որ քո ինձ
տուած այս տկար վիճակիս մէջ ես ինքնս
իմ անձս դատեմ, որպէս զի դու ինքնդ
չդատես զիս այն ժամանակ, երբ բո-
լորովն կ'եղծանի կեանքս և կը վերջա-
նայ աշխարհս: Երբ, ո՞ր Տէր, որովհե-
տեւ իմ մահուան րոպէին ես աշխար-
հէս բաժնուած և ամեն բանէ մերկս
ցած պիտի լինիմ, և միայն քո առաջ
ներկայացած, որ իմ սրտի ամեն շարժ-
մանց համար պատասխան տամ քո ար-
գարութեան, ուրեմն այնպէս արա՛,
որ հիւանդութիւնը մի տեսակ մահ
համար իմ ինձ համար. աշխարհքէն
բաժնուած, իմ ցանկութեան ամեն ա-
ռարկաներէն հեռացած և մերկացած,
բեզ միայն ներկայանալով քո ողորմու-
թենէն խնդրեմ դարձ և նորագութիւն
սրտիս. և այսպէս միտթարութեամբ ևս
անսահման միտթարութեամբ, վասն
զի կատարեալ մահ զոյգեցի և արդաւ-
րութիւնդ գործադրելէ յառաջ՝ դու
այժմ քո գթութեամբդ մի տեսակ
մահ կ'ուղարկես ինձ: Մտուած իմ,
ինչպէս որ դու իմ մահուան առաջքն
կ'առնաս, այնպէս արա՛ որ ես եւս քո
դատաստանի խստութեան առաջքն
առնեմ, և յառաջ բան քո դատելի:

ես ղինքս գատեմ, որպէս ղի սղորմու-
թիւն գտնեմ քո առջեւ :

Դ. Այնպէս արա՛, Աստուած իմ, որ
ես իմ կ'ենաց ուղղութեան համար ը-
ռութեամբ պաշտեմ քո պաշտելի՛ Աս-
խանամութեան հրամանը, թող քո
պատիժը ղիս միթիւրէ, որպէս ղի քա-
նի որ խաղաղ ժամանակ մեղաց գառ-
նութեան մէջ կեցած եմ հիմա, այս
փրկարար ցաւոց ընթացքին մէջ ես՝ ու
բոլ զու ղիս պատուհասած ես, քո
երկնային շնորհաց քաղցրութիւնը ճա-
շակեմ։ Բայց ես կը խոստովանիմ, Աս-
տուած իմ, որ այնչափ խառնացած է իմ
սիրտս և լի աշխարհային գաղափար
ներով, հոգսերով, խռովութեամբ և
ցանկութեամբ, որ ոչ հիւանդութիւն
և ոչ առողջութիւն, ոչ քարոզ, ոչ խը-
րատ, ոչ գիրք, ոչ քո Աստուածաշունչն,
ոչ քո Աւետարանն, ոչ քո սուրբ խոր-
հուրդներն, ոչ ողորմութիւնք, ոչ ծովք
և ոչ արահք, ոչ ճնշումն մարմնոյ, ոչ
հրաշք, ոչ հաղորդութիւն և ոչ պա-
տարագ մարմնոյ քո, ոչ իմ բոլոր զը-
րութիւնն և ոչ բովանդակ աշխարհինը
չեն կարող իմ սիրտս փափոխել և դար-
ձնել, եթէ դու այս ամեն բաներուն
չնկերակցիս և չմիտնաս քո շնորհաց
և գթութեան դերբնական ներկայու-
թեամբ և օգնութեամբ։ Այս պատ-
ճառաւ ահա քեզ կը դիմեմ, Աստուած
իմ, Աստուած ամենազօր, քեզ կը դի-
մեմ այն արագեւր խնդրելու, որ բո-
լոր արարածները չեն կարող ինձ տալ։
Այս չէի համարձակեր իմ աղաղակս առ-
քեզ ուղղել, եթէ ուրիշ մի կարողա-
նար աղաչանքս կատարել։ Բայց Աս-
տուած իմ, քեզմէ խնդրած անձիս դար-
ձը և իմ նորդութիւնս այնպիսի գործ
է, որ ի վեր է քան զամենայն կարո-
ղութիւն համայն բնութեան, ուրեմն
միայն քեզ կարող եմ դիմել, որ արա-
րիչ և ամենակատար Տէրդ ես բնութե

և արտի խնդր։ Ամ աղաչեմ, Տէր իմ,
ո՛ւմ դիմեմ, եթէ ոչ քեզ։ Ինչ որ Աս-
տուած չէ, նա չէ կարող իմ անկեղծ
թիւնս կատարել։ Ինքն Աստուածն է,
զոր ես կը խնդրեմ ու կ'սրտնեմ, և մի
այն քեզ, քեզ միայն կը դիմեմ՝ Աս-
տուած իմ, որ գրեզ ստանամ։ Բայց սիր-
տս, Տէր իմ, մոխր այս ապստամբ բը-
նակարանը, որ մոլութիւնները պաշա-
րած գրաւած են, եւ իրենց հաւ-
տակ արած։ Ատիւր այն տեղ՝ որպէս
ի տուն հզօրի, բայց նախ կապէ հզօր
և կարող թշնամին, որ նորան կ'իշխէ, և
այն տեղ գտնուած գանձերը յափշտա-
կէ։ Աստուած իմ, քանցէ, խլէ, կարգէ
իմ զգացմունքներս, որ աշխարհը որ-
սացած գողացած է, ինքնին դուռն ևս
գողցիր այս գանձը, կամ աւելի լաւ է
ասել յետ առ, որովհետեւ միայն քեզ կը
պատկանի, ճիշտ հարկի մը պէս, որ քեզ
միայն պարտաւոր եմ վճարել, վասն ղի
քո պատկերդ այն տեղ գրողմուած է։
Աստուած իմ, դու այն տեղ տպաւորե-
ցիր զայն իմ վերտութեան՝ իմ վերտոյն
ծննդեան ժամանակ, բայց այժմ բոլոր-
րային ջնջուած է։ Դու միայն կարողա-
ցար ստեղծել սիրտս ու հոգիս, զոր և
այժմ դու միայն կարող ես վերստին
ստեղծել, դու միայն կարողացար ձե-
ւակերպել այն տեղ քո պատկերդ։
Դու միայն կարող ես վերանորոգել ու
վերստին տպաւորել քո ջնջուած պատ-
կերը, այսինքն իմ փրկիչն Յիսուս Քրիս-
տոս, որ քո պատկերն է և քո էութեան
նկարագիրը։

Ե. Աստուած իմ, որչափ երջանիկ է
այն սիրտը, որ կարող է այսպիսի չքնաղ
առարկայ մի սիրել, որ երբէք զինքն չան-
պատուեր, և որուն հետ կապուին այն
քան փրկարար է իրեն համար։ Այս կըզ-
գամ, որ առանց քեզ անհաճոյ լինե-
լու, առանց ինձ վնասելու և անպա-
տիւ ընելու չեմ կարող աշխարհը սե-

րել, և տակայն դեռ աշխարհն իմ վայելչութեանցս առարկայ է: Աստուած իմ, որչափ երջանիկ է այն հօգին, որոյ վայելչութիւնը դու ես, որովհետեւ կարող է նա անձնատուր լինիլ քո սիրոյն: ոչ թէ միայն առանց տագնապելու և տարակուսելու, այլ նա և պատուով և արժանաւորութեամբ: Ինչքան հաստատուն և մշտնջենաւոր է նորա երջանկութիւնը, քանզի ունայն և անպտուղ չէ նորա ակնկալութիւնը, որովհետեւ դու անփոփոխ ես և անեղձանելի: սուտի և ոչ կեանքն, և ոչ մահը՝ չեն կարող երբէք բաժնել ղինքն իւր սիրոյ և ցանկութեան առարկայէն, և այն լուսէն, որ մեղաւորներն իրենց սրտած կուռքերով պիտի տանի դէպ ի ընդհանուր ասականութիւն, նոյն լուսէն արդարները պիտի միացնէ քեզ հետ ընդհանուր վառքով: Իւ այն ինչ առաջինները պիտի կորնչին իրենց սիրած կորստական առարկայներով, երկրորդները պիտի մնան յաւիտեան այն ինքնագոյ և յաւիտենական Լուսին հետ, ընդ որում միացած են անբաժան: Ա, որչափ երջանիկ են նորա, որք բովանդակ ազատութեամբ և անյաղթ յօժարութեամբ կամաց կատարելապէս և անստորէն կրտսրեն զայն, զոր պարտական են սիրել անշուշտ:

Զ. Աստուած իմ, կատարէ այն բարի զգացմունքներն ու շարժմունքները, զորոս դու ինձ կուտաս, դու ինչպէս նույն սիրողն եղած ես, նոյնպէս դու եղիւր նոցա կատարած, պատկէ քո սեպհական պարզեւնները, վասն զի կը խոստովանիմ ես, որ նաքա քո պարզեւններն են: Այո, Աստուած իմ, և ամենեւին չկարծելով՝ որ իմ ազատներն կարող են այնչափ արժանաւորութիւն ունենալ, մինչեւ պարտաւորեն զքեզ կարեւորութիւն տալ նոցա, ես խորին խոնարհութեամբ կը խոստովանիմ, որ իմ

սիրտս, զոր դու միայն քեզ համար ընտեղծած էիր և ոչ աշխարհի և ոչ նաեւ ինձ համար, նոյն սիրտը արարածներուն տալով, քո գթութենէն միայն կարող եմ շնորհաց ակն ունիլ, որովհետեւ չը կայ յիս այնպիսի մի բան, որ կարողանայ պարտաւորել զքեզ ինձ ողորմելու, և իմ սրտիս բոլոր բնական շարժմունքներն ու զգացմունքները դէպ ի տարաբաժնեք և դէպ ի իմ անձս ձգտելով քո բարկութիւնը շարժելէ աւելի ուրիշ բան կարող չեն ընել: Շնորհակալ եմ քեզմէն, Աստուած իմ, այն բարի շարժմանց և ըզձից համար, զարսկուտաս ինձ, և նաեւ այն վախաբին համար, զոր քեզմէն գոհանալու համար կուտաս:

Է. Շարժէ սիրտս որ զոչամ յանցանքներս, որովհետեւ առանց ներքին ցաւոյ՝ արտաքին վիշտերը՝ որով դու կը նեղես իմ մարմինս, նոր պատճառ մի կը դառնան յանցաւորութեան Հասկացման ինձ, որ մարմնոյ տառապանքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ պատիժ, և միանգամայն պատկեր ցաւոց և հեշտութեանց սրտի: Բայց, Տէր իմ, այնպէս արա, որ արտաքին տառապանքները միանգամայն եւ բժշկութեան պատճառ լինին, և իմ ցաւոց մէջ զգացնել տան այն ցաւը, որ ես չեմ զգար հոգւոյս և սրտիս մէջ. թէպէտ և բոլորովին հիւանդ եմ և վերքերով ծածկուած: Արովհետեւ ամեն հիւանդ դու թեանց մեծն այն չափազանց թուրութիւնն ու անզգայութիւնն է, որ վերցուցած էին իմ սրտէն իւր սեպհական թշուառութիւններն զգալու կարողութիւնը, տուր ինձ զգալ, Տէր իմ, և թող իմ մնացած կեանքս մի շարունակ առաջնարանք լինի իմ գործած մեղքերս և անիրաւութիւններս քաւելու:

Ը. Աստուած իմ, թէպէտ և իմ անցեալ կեանքս զերծ ու ազատ է եղած

մեծամեծ յանցանքներէ, որոց պատ-
ճառները դու հեռացուցած ես ինձմէն,
բայց դարձեալ շատ ատելի եղած է
իւր շարունակ անհոգութեամբ, քո
ամենամեծ խորհրդոց չարաչար գոր-
ծածութեամբ, քո խօսքը և շնորհքը
արհամարհելով, ծուլութեամբ և իմ
բոլոր գործոց և մտածմանց ոչնչու-
թեամբ, ժամանակի բնաւին կորսու-
տեամբ, որ դու տուած էիր ինձ միայն
զբեզ պաշտելու համար, իմ ամեն պա-
րազմանց մէջ քեզ հաճոյ ճանապարհ-
ներ և միջոցներ որոնելու համար, և
այն ամեն օր գործուած յանցանքները
ապաշխարելու համար, որոցմէ արդար-
ներն անգամ զգուշանալու կը պար-
տաւորին, իրենց կեանքը շարունակ ա-
պաշխարութեան մէջ պահելու, ապա ե-
թէ ոչ վտանգի մէջ կ'ըկնին և կը կոր-
սննցնեն իրենց արդարութիւնը, (Վ)յս-
պէս ուրեմն, Մտուած իմ, ես ամեն
ժամանակ քեզ հակառակ եմ եղած:

Թ. Վյո՛, Տէր իմ և Մտուած իմ,
մինչեւ ցայսօր ես խուլ և համբ էի քո
ներշնչութեանց և աստուածեղէն ազ-
դեցութեանց. ես արհամարհեցի քո
պատգամները. ես քո դատածիդ հա-
կառակն դատեցի. ես հակառակեցայ
այն սուրբ օրինակներուն, զորս դու աչ-
խարհ բերիր քո յաւիտենական Հօր
ծոցէն, և որոցմով աշխարհը պիտի դա-
տես: Վու ասացեր, — Նրանի՛ լացողնե-
րուն, և վայ խնդացողներուն: Իսկ ես
ասացի, — Թշուառ են նոքա, որք կը հե-
ծեն, և շատ երջանիկ են նոքա, որք մը-
խիթարուած են: Վս ասացի, — երանի
նոցա, որք յաջող բաղդ, փառաւոր պա-
տիւ և հաստատուն աւողջութիւն կը
վայելնեն: Եւ ինչո՞ւ ես այսպիսիներն եր-
ջանիկ համարեցի, եթէ ոչ այն պատճա-
ռաւ, որ այս ամեն յաջողութիւններն
իրենց առատ և արձակ դիւրութիւն
կը մատակարարէին արարածները վա-

յելելու, այսինքն զբեզ թշնամանելու
և վշտացնելու: Վյո՛, Տէր իմ, կը խոս-
տովանիմ, որ ես աւողջութիւնը բա-
րիք համարեցի, ոչ թէ քեզ ծառայ-
ելու, շատ հսկումներ և աքնութիւն-
ներ քո սպասաւորութեանդ նուիրե-
լու և ընկերին օգնելու ամենադիւրին
միջոց մի իննելուն համար. ոչ. այլ նորա
համար, որ ես աւողջութեան շնորհիւ
կարող եմ չափաւորութիւն չափհեղ
կենաց վայելչութեան և հեշտութեանց
մէջ և աւելի լաւ ճաշակել նորա մա-
հառիթ զուարճութիւններն: (Գ)նի՛
ինձ, Մտուած, նորոգէ իմ ապական-
ուած միտքս և բանականութիւնս, և
իմ զգացմունքներս ու կամքս՝ քո կամ-
քին համաձայնեցուր, այնպէս որ եր-
ջանիկ համարիմ զիս տառապանաց մէջ,
որ այլ ևս չը կարողանալով քո կամքէն
արտաքոյ գործողութիւն ունենալ դու
այնպէս մտքբեւ և սրբեւ իմ զգացմունք-
ներս, որ այլ եւս հակառակ չը լինին
քո կամոց, և այսպէս զբեզ գտնեմ իմ
մէջ, վասն զի չեմ կարող զբեզ ինձ-
մէն արտաքոյ սրննել, զի ես առանց
քեզ տկար եմ և թշուառ: Վրովհետեւ
քո թագաւորութիւնը քո հաւատա-
ցեալներու մէջն է, ով Մտուած, և
ես կը գտնեմ զայն իմ մէջ՝ եթէ գըտ-
նեմ քո հոգին և քո զգացմունքներն:

Ժ. Բայց, Մտուած իմ, ի՞նչ անեմ,
որ պարտաւորեմ զբեզ քո հոգին ծա-
ւալելու այս թշուառ երկրի վրայ: Վս
ամեն կերպով քեզ ատելի եմ, և իմ
մէջ այնպիսի բան չեմ գտներ, որ
կարողանայ հաճոյ լինել քեզ: Վս այն
տեղ երբէք ուրիշ բան չեմ տեսներ,
ով Տէր, բայց միայն իմ ցաւերս, որք
նմանութիւն ունին քո ցաւերուն:
Նայէ՛, զննէ՛ ուրեմն այն վիշտերն ու
տառապանքներն, զոր ես կը կրեմ, և
որք մի կողմէն ինձ կը սպառնան: Վը-
թութեան աջօք նայէ՛ այն վէրքերուն

վերայ, զոր քո ձեռքը դրած է: Ո՛վ Փրկիչ իմ, որ չարչարանքները սիրեցիր մինչ ՚ի մահ: Ո՛վ Մտուռած, դու որ մարդացար, որ դու՝ միայն կրես մարդկան տառապանքները, մարդկան փրկութեան համար և ոչ այլ որ: Ո՛վ Մտուռած, դու՝ որ մարմնացար մարդկան մեղքերու համար և որ միայն նորա համար մարմին սուեր, որպէս զի մարմնաց մէջ կրես այն չարչարանքները, որոնց արժանացած էինք մեր մեղքով: Ո՛վ Մտուռած իմ, դու տառապակիր ու չարչարող մարմիններն այնքան կը սիրես, որ բեղ համար այնպիսի ծանր չարչարանք կրող մարմին ընտրեցիր, որ աշխարհքը երբեք չէր տեսած: Ո՛վ Մտուռած, հաճելի արա՛ իմ մարմինս, ոչ թէ իրեն համար և ոչ աշխարհի համար, վասն զի ամեն ինչ արժանի է քո բարկութեան, այլ այն տառապանքներուն համար, որոնք միայն կարող են արժանի լինել քո սիրոյն: Սիրէ իմ տառապանքներս, Տէր իմ, և թող իմ տառապանքներս հրաւիրակներ լինին քեզ, որ այցելութիւն առնես ինձ: Բայց քո բնակարանի պատրաստութիւնը աւարտելու համար այնպէս արա՛, Տէր իմ, որ եթէ իմ մարմինս նմանութիւն ունի քո մարմնոյն, թող տանջուի իմ մեղաց համար, և իմ հոգիս քո հոգւոյդ հետ միանալու համար թող նա ևս արտմի մի և նոյն մեղքերու համար, և այսպէս ահա՛ թող չարչարուիմ ես քեզ հետ և քեզ նման թէ՛ մարմնով և թէ՛ հոգւով իմ գործած մեղքերու քաւութեան համար:

ԺԱ. Հաճեաց, Տէր, միացնել քո մխիթարանքը իմ տառապանքներուս հետ, որ քրիստոնէի պէս տառապիմ: Եւ չեմ խնդրեր ամենեւին որ ցաւեքէ դերձ լինիմ, որովհետեւ այս է սրբոց վարձքը, բայց կը խնդրեմ ես, որ առանց քո հոգւոյն մխիթարութեան չը

մատնուիմ բնութեան վիշտերուն, որովհետեւ այս Հրէից և Հեթանոսաց անէծքն է: Եւ չեմ խնդրեր, որ կատարեալ մխիթարութիւն ունենամ առանց տառապանաց և չարչարանաց, որովհետեւ այսպիսի կեանքը փսոռ սիրութեան կեանք է: Այնպէս չեմ խնդրեր, որ բոլորովին տառապանաց մէջ լինիմ առանց մխիթարութեան, որովհետեւ այս վիճակ է յուզայական: Բայց կը խնդրեմ, Տէր, որ բոլորն ՚ի միասին զգամ, թէ՛ բնութեան ցաւերն իմ մեղաց համար, և թէ՛ քո հոգւոյ մխիթարութիւնները քո գթութեամբ, վասն զի այս է քրիստոնէութեան ճշմարիտ վիճակը: Թող չզգամ ես վշտերն առանց մխիթարութեան, այլ վիշտք և մխիթարութիւն ՚ի միասին. որպէս զի առանց ցաւոյ և հեծութեան միայն քո մխիթարութիւններն զգալու կէտին հասնիմ: Վասն զի թող տուիր դու, Տէր, որ աշխարհը նուազի բնական տառապանաց մէջ յառաջ քան քո միածին Որդւոյ գալուստը. իսկ այժմ դու կը մխիթարես ու կը քաղցրացնես քո հուշատացեալներուդ տառապանքները, քո միածին Որդւոյ շնորհիւ. և դու կատարեալ երանութեամբ կը լըցնես քո սուրբերը Սրբոյն որդւոյդ փսոռքով: Եւ ես նախ հրաշալի աստիճանները, որով կը կառավարես դու քո ձեռագործները: Դու զիս առաջինէն հանեցիր, երկրորդէն ևս անցնու՛ երրորդին հասնելու համար: Ո՛վ Տէր, շնորհքն է, զոր ես քեզմէն կը խնդրեմ:

ԺԲ. Սի թողուր, Մտուռած իմ, որ ես այնչափ հեռու լինիմ քեզմէն, որ կարողանամ դիտել քո անձդ տու՛մ մինչ ՚ի մահ և մարմնիդ մահուանէ ճնշուած իմ մեղացս համար, առանց և ես ինքնին ուրախութեամբ կրելու չարչարանքներ թէ՛ հոգւով և

թէ մարմնով: Այսին դէպքէն կայ այն պէս ամօթալի, և սակայն քրիստոնէից և իմ մէջ այնպէս սովորական ինչպէս այն անդգայութիւնը, որ այն ինչ դուարիւն կը թափես մեր մեղքերը քաւելու համար, մենք կեանք կը փարենք հեշտախտութեանց մէջ: Այն կայ այն պէս սովորական, ինչպէս այն քրիստոնեաներն, որք կը խոստովանին թէ քեզ կը պատկանին, որք մկրտութեամբ աշխարհն ուրացած են քեզ հետեւելու համար, որք հրապարակաւ յանդիման Նիկեացոյ ուխտած են ապրիլ և մեռնիլ քեզ հետ, որք կը խոստովանին և կը հաւատան որ աշխարհս դքեզ չար չարած ու խաչած է, որք կը հաւատան, որ դու քո անձը մատնած ես Մատուոյ ըստիւթեան և մարդկան անգթութեան՝ իրենց մեղքերէն դռնելու և ազատելու համար, որք կը հաւատան այս ամեն ճշմարտութեան, որք քո մարմինը կ'ընդունին որպէս սաւտարագ և զոհ, որ նուիրուած է նոցա փրկութեան համար, որք աշխարհի զուարճութիւններն ու մեղքերը կը համարին որպէս միակ պատճառ քո չարչարանաց և աշխարհն որպէս դահիճ. և սակայն ի՞նչ կայ նոյնպէս սովորական և ամօթալի, որ դարձեալ նոքա կը խնդրեն փայտայել իրենց մարմինը սոյն այս զուարճութիւններով և սոյն խոյ աշխարհի մէջ. որոնք առանց դողալու և զարհուրելու չեն կարող տեսնել մարդ մի, որ կը սիրէ կը փայտայէ իւր հայրն սպանողը, այն հայրը որ իւր անձը մատնած էր իրեն կեանք տալու համար, և սակայն նոքա այս ամենը տեսնելով դարձեալ կարող են ապրիլ աշխարհի մէջ ինչպէս ես ապրեցայ կատարեալ ուրախութեամբ: Այս կ'իմանամ թէ ես եմ կատարելապէս զայն սպանողն, զոր ինձ Մատուած և Հայր կը ճանաչեմ, որ մատ-

նեց իւր անձն իմ փրկութեան համար, և որ կրեց իւր մարմնոյ մէջ իմ անօրէնութեանց տանջանքը: Արաւունք ունէիր, Տէր, որ ընդհատեցիր այսպիսի յանցաւոր ուրախութիւնը, ինչպէս և այն ուրախութիւնն, որուն մէջ ես կը հանգստանայի իրրեւ ի ստուերս մահու:


ՃԳ. Հեռացուր ուրեմն ինձմէն, Տէր, այն տրտմութիւնը, որ իմ անձնասիրութիւնը կարող է տալ ինձ իմ իսկական նեղակրութեանց համար, և այն աշխարհային բաներու համար, որոնք չը յաջողեցան ի հաճոյս կամաց իմաց, և որոնք քո փառաց չէին վերաբերեր: Այոց դիր սրտիս մէջ տրտմութիւն, որ նման լինի քո տրտմութեան թող իմ տառապանքները քո բարկութիւնը զիջուցանելու համար լինին: Իմ այս չարչարանքներս ու վրէտներս իմ փրկութեանս ու նորոգութեանս համար առիթ մը չինէ: Աթէ ես այսուհետեւ կեանքի առողջութեան ցանկամ, թող այն ևս լինի գործ զնել և վերջացնել միայն քեզ համար, քեզ հետ և քո մէջ: Այս քեզմէն ոչ առողջութիւն կը խնդրեմ, ոչ հիւանդութիւն, ոչ կեանք և ոչ մահ, բայց միայն կը խնդրեմ, որ թէ իմ առողջութիւնս և թէ հիւանդութիւնս, թէ կեանքս և թէ մահս, ամենն ևս պատրաստես քո փառաց համար, իմ փրկութեան համար, քո Նիկեացոյ և քո սրբոց օգտին համար, որոց յոյս ունիմ որ ես եւս մասնակից լինիմ քո շնորհօք: Վու միայն գիտես թէ ի՞նչ է ինձ պիտանի և շահաւէտ, դու ես իմ գերադոյն Տէրն, արա՛ ինչ որ կամենաս: Տուր ինձ, ա՛ռ ինձմէն, բայց իմ կամքս քո կամքին համաձայնեցուր, որպէս զի խոնարհ և կատարեալ հնազանդութեամբ և սուրբ հաւատարմութեամբ պատրաստեմ զիս քո յա-

ախտենական Նախախնամութեան հր-
րամաններն ստանալու և կարողանամ
հաւատարմութեամբ պաշտել զայն ամե-
նայն, ինչ որ կր պարգևեալս գու ինձ :

ՃԴ. Այնպէս արա՛, Աստուած իմ,
որ ես հոգւոյս հանապազօրեայ միա-
կերպութեան մէջ ստանամ ամեն տե-
սակ դէպքեր և պատահմունքներ, ու
բախտեալ մենք չենք իմանար թէ ի՞նչ
պէտք է խնդրենք, և ոչ մին և ոչ
միւսն չեմ կարող խնդրել ես առանց
կասկածանաց և առանց դատաւոր ու
պատասխանատու կացուցանելու իմ
անձս նոցա հետեւանացն, զորս քո
անհուն իմաստութիւնը կամեցած է
ինձմէն ծածկել : Աստուած իմ, ես գի-
տեմ, որ ես միայն մէկ բան գիտեմ,
այսինքն բարի է քեզ հետեւել և չոր է
քեզ վերաւորել : Իսկ յայսմանէ չը
գիտեմ ես թէ ի՞նչ է ամենալաւ և
ի՞նչ է ամենավատն ամեն բանի մէջ,
չը գիտեմ ես, թէ ո՞րն է ինձ համար
օգտաւէտն, առողջութիւնն՝ թէ հի-
ւանդութիւնը, հարստութիւնն՝ թէ
աղքատութիւնը, և ոչ ևս աշխարհիս
ամեն բաներն : Այս մի որոշումն է, որ
ի վեր է բան զմիտք մարդկան և հրեշ-
տակաց, և որ ծածկուած է քո Նա-
խախնամութեան այն դաղանշաց մէջ,
զոր ես կը պաշտեմ և զոր չեմ ուզեր
քննել :

ՃԵ. Օգնէ ինձ ուրեմն, Աստուած
իմ, որ ինչ ևս լինիմ, ինչպէս որ լինիմ
քո կամքիդ համաձայն լինիմ, և հի-
ւանդ լինելով, ինչպէս որ եմ, փառա-
ւորեմ զքեզ իմ նեղութեանց մէջ :
Առանց նեղութեանց և տառապանաց
եւ չեմ կարող հասնիլ փառաց, և դու
լինք, ո՞վ Տէր իմ, չարչարանքով միայն
կամեցար փառաւորութեան հասնիլ :
Ինչ չարչարանաց նշաններով դու ճա-
նաչուեցար քո աշակերտներուդ եւ
չարչարանքով է որ պիտի ճանաչես ա-

մեն քո աշակերտներդ : Դ՛անաչե՛ ու-
րեմն զիս եւս իբրեւ քո աշակերտդ
այն տառապանքներով, զոր ես թէ՛ իմ
մարմնոյս և թէ՛ հոգւոյս մէջ կը կրեմ
իմ գործած մեղքերուս համար : Այլ ու-
րովհետեւ Աստուածութեանդ հաճելի
չէ երբեք բան մի, որ քեզմով չը մա-
տուցուիր, միացուր ուրեմն իմ կամքս
քո կամաց հետ և իմ վշտերս ու ցա-
ւերս քո կրած վշտաց հետ : Այնպէս
արա՛, որ իմ տառապանքներս ու վշ-
տերս քոյդ լինին, միացուր զիս քեզ
հետ, լը՞նք զիս քեզմով և քո սուրբ
հոգւով : Մտի՛ր իմ սրտիս և հոգւոյս
մէջ, որ իմ տանջանքներս կրես, և յիս
չարունակես զայն՝ ինչ որ պակաս մը-
նացած է քո չարչարանքներէն, որ կա-
տարես վերջացնես քո անդամներուդ
մէջ մինչեւ ի կատարեալ սպառումն
մարմնոյ, որպէս զի քեզմով լցուելով՝ ոչ
թէ ես լինիմ ապրողն ու չարչարուողն,
այլ դու լինիս, որ կատարես և կը չոր-
չարուիս իմ մէջ, ո՞վ իմ Փրկիչ, և այս-
պէս փոքր ինչ մասն ունենալով քո
չարչարանաց, լըցնես զիս այն փառքով
զոր ստացած ես տանջանքով, և որով
կեանք ընդ Հոր և ընդ Դ. Հոգւոյն
յաւ խոեանս յաւ խոեանից, ամէն :



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԶԱՐԵԷ, ՇԱՀԱՊ, ԿՈՐԻՒՆ

Հետեւեալ Տրամախօսութիւնը մեր բարեկամաց մին զոհած է մեզ ի հրատարակութիւն, հեղինակին նպատակն եղած է յանդիմանել այն հարստ և անարդար որտեքը, որք ինքնադատութեան օրէնքէն խուսելով միմիայն զայլս կը դատաւարտեն. երբեք չեն ուզեր զգալ թէ իրենց դէմ եղած զրկանքը բուն իրենց պարտազանցութեան հետեւութիւնն է: Կ'երեւի թէ՝ մեր բարեկամը այս մօտերս այսպիսեաց յաճախ պատահած պիտի լինի, որ գրող ուռած է գրել: Ինքնամոլութիւնը խիստ վնասակար տխուր մի է մարդկային ընկերութեան, մանաւանդ երբ այլոց օգուտը խորհելու պատրուակին տակ ծածկուած լինի այն. քանզի այն ատեն զինքը ճանչնալը դժուարին է. ինքնամոլը յամառեալ կը լինի, ուստի եթէ մեր բարեկամը իւր արամախօսութեան մէջ զաննք շուտով զնուցանել տուեր է, յատկութիւննին չի ճանչնալէն չէ, այլ՝ կ'երեւի որ թէ՛ տարապարտ խօսքն երկարել չէ կրամեցեր, և թէ՛ ոչ այնչափ կամեցեր է նույն օրայիտութիւնը նկարագրել, որչափ փափաքեր է ցոյց տալ թէ ինչպէս պարտաւոր են լինիլ. այս պատճառաւ զայրոյթէ՛ զնրման անցնելու ատեն քիչ մի անյարմարութիւն և թուրութիւն կը նշմարուի, զոր և ինքնին կը խոստովանի. սակայն ինչալ որ լինի, մենք զայն խիստ օգտակար կը գտնեմք, և յօժարութեամբ կը փութամք հրատարակել, յուսալով որ բազումք կարող են բարոյական օգուտներ քաղել:

Ի

Բազումք կ'ասեմք, և իրաւամբ, քանզի թէպէտ այս խօսակցութեանց գերասանքն երեք են միայն, բայց ոչ աղարքէն աշխարհի տեսարանին մէջ խիստ բազմաթիւ են զայն ներկայացնողք. ընթերցողը թող գատէ:

Զարեհ. - Թող զիս բարեկամ, ամեն կողմէն վնասցած ու ամեն բանէ ձանձրացած եմ, ազգէս, բարեկամներէս, գործերէս և բուն իսկ անձէս. իմ կըրածս անտանելի է, չգիտեմ ի՞նչ սեւսատանայ մի շարունակ ոտքերուս կը պլլուի. քայլերս կ'արգիլէ և զիս կը խայտառակէ. ազգիս համար ինչ որ բռնեցի՝ ձեռքս մնաց: Չգիտեմ, ի՞նչ զարմանալի անզգայութիւն է այս, որ կը աիրէ մեր ազգին վերայ, գողցես անսթափելի քնափութիւն, չըսեմ մեռելութիւն մի ծանրացած է իւր հոգեկան կարողութեանց վերայ և զանոնք անընդունակ կ'ընէ ամեն բարեմասնութեանց. այսքան դուռում գոչումէն կոկորդոս պատուեցաւ, շունչս հատաւ, իսկ նա դեռ անզգայ, անշարժ և անխիրտ ինկած կը մնայ տգիտութեան մէջ: Իմ կենացս գեղեցիկ օրերը, իմ հարստութիւնս, պատիւս, վերջապէս ամեն բան զոհեցի իրեն համար, իւր զարգացման, լուսաւորութեան և յառաջադիմութեան համար բան չի խնայեցի, խօսեցայ անխնայ, լոյս և գիտութիւն քարոզեցի եռանդով, գիտութիւններ սովորեցուցի աննախանձ սիրով, անտանելի աշխատանք կրելով հոգիս բերանս եկաւ, այս հասակիս մէջ մազերս ձերմկեցան, բայց ազգը զիս չը ճանչցաւ, հոգ չէ. զիս չը վարձատրեց, այդ ալ հոգս չէ. գոնէ իրեն համար ըրած կորուսաներս չի վճարեց, թող այդ եւս բանի տեղ դրած չը լինինք. ստոնցմէ աւելի կը ցաւիմ սա դժբաղդութեան վերայ, որ իմ ջանքե-

17

ըրա ունայն եղան, ազգը օգուտ չունեցաւ, ինչ որ է՝ նոյնն է: Այն բարեկամ գիտէք սիրտս որչափ կը հատնի, ան դգայութիւնը՝ անգործութիւնն է, ան գործութիւնը՝ փտութիւնն է, փտութիւնը՝ սպառումն, սպառումը՝ յուսահատեցուցիչ, ես ալ յուսահատած եմ:

Հակապ. — Այնպէ՛ լեզու, կեցցէ տրամաբանութիւն:

Զարեհ. — Ամենպի այս ազգը անզգայ և անգործ է, հետեւաբար փտութեան և սպառման կը դիմէ, իւր շաւիղը կուրստական է. բայց կը ցաւիմ, որ իմ մտերիմ բարեկամներս ալ ինձ օգնելու տեղ չգիտեմ ինչ պատճառաւ, զիս կը թողուն և օգնութիւննին կը ղանան, ասոր համար գործերս ալ երեսի վրայ կը մնան, շահերս կը պակսին, ես ալ կը լինիմ աստանդական, այսու ամենայնիւ որչափ կ'ըսեմ, որ այսպիսի գործոց չի խառնուիմ, անհնարին կ'ըլլայ. կարծես բնական իմն բերմամբ կը մղուիմ, այս առթիւ անձէս ալ դժգոհ եմ, և դուք որչափ լու միջոցի պատահեցաք. այս ըտպէիս մարդու մը կարօտ էի, որ քիչ մը խօսակցելով մտատանջութիւնս փարատէի. ըսէք նայիմ ատանկ վիճակի մը մարդ կը դիմանայ:

Հակապ. — Իրաւ է ձեր անխոնջ և անվհատ աշխատութիւնը անուրանալի է, ձեր պաշտօնը ծանր է, դուք մշտքերու հետ կը կռուիք, և զէնք ունիք ձեզ դիւրագարձ լեզու, երազ խորհրդաբանութիւն, որանչելի ճարպիկութիւն և բազմադիմի հանճար, հանճար մի, որ ծովու պէս խոր, հեղեղի պէս յորդ, մթնալորտի պէս անհուն, արեգակի պէս պայծառ, աւազի պէս անսպառ. դուք ամեն օր անհանգիստ էք, միշտ անխնայ ձեր գիտութիւնը կը ծաւալէք, կը սփռէք կը տարածէք ամենուն վրայ ձմրան ձիւնի պէս, բայց

սպաշնորհ մարդիկ կը մերժեն կը հաւածեն զայն հրաշունչ հովի պէս: Չափազանցութիւնը ըրած չեմ ըլլար՝ թէ որ զձեզ բնութեան հրաշալիքը անուանեմ. մանաւանդ պակաս ալ ըրած կ'ըլլամ, դուք ճշմարիտ ազգասէր մ'էք, որ ձեր զգայուն սրտին մէջ վառուած սիրոյ բոցերով կը ձենձերիք և կը ճրդնիք ազգը անոր ջերմութեամբն ոգեւորել, և սոյնառ նշայներովը լուսաւորել. բայց սրտանց կը ցաւիմ որ ազգըն անզգայ է. քու ձգանցդ դէմ, քու արժանիքդ չի ճանչնար, ողորմելի ենք այս մասին, որ ազգն իրեն օգտին աչխատողներուն հետ դատապարտելի անհոգութեամբ կը վարուի, որուն վախճանը վհատութիւն և լքումն է:

Զարեհ. — Արդէն բուն ցաւալի կէտն այդ է, միթէ մենք մարդ չե՞նք, օր մ'ալ վհատութիւնը մեր վրայ տիրածին պէս՝ վայն եկեր է ազգին գլխուն...

Հակապ. — Այս գիտեմ, որ եթէ ազգին նարստող մէկը կայ, այն դուք էք. եթէ զայն իւր մութ ու մոլոր ճանբուն մէջ լուսաւորող փարոս մի կայ, այն դուք էք. եթէ ազգը մտաւոր ու բարոյական օգուտ կը սպասէ, պէտք է քեզմէ, և միւսին քեզմէ սպասէ. բայց և այնպէս դուք մի վհատիք, որ այսօր չի ճանչնար, դուք յուսալու և միտթարուելու հաղարաւոր առիթներ ունիք, քանզի օր մի անշուշտ պիտի ճանչնայ ազգը և զքեզ վարձատրէ. բայց ես ի՞նչ ընեմ, եթէ յուսահատիլ պէտք է, այդ իմ բաւինա է, եթէ ողորմելի մի կայ, այն ես եմ, ես, որ ամեն կողմէն յոյս հատած, ճարս կտրած ինչ ընելու չգիտեմ:

Զարեհ. — Եթէ անկեղծ սիրտդ չի ճանչնայի, թերեւս ինձ համար ըսածներդ չափազանց դանաչի. բայց շնորհակալ կ'ըլլամ քու աղիւս զգացումէդ, որ այդպէս արժանիք կը ճանչնաս և գոնէ ճանչնալովդ զիս կը վարձատ-

րես , այդ ալ միտիծարուծիւն մ' է մարդուս . ուստի ուրախ եմ որ այս կերպով կը քաջաւերուիմ այսօր յառաջ տանել գործս , սակայն կ'աղաչեմ , ձեր վիշտն ինչ է , ինչ սենիք , որ այդչափ լքեալ կ'երեւիք . գիտէք , վիշտերն իրարու յայտնելով կը թեթեւանան , բռնէք , կ'աղաչեմ , գուցէ օգտակար կըրնամ ըլլալ ձեզ :

Հահայ . — Ինչ պիտի ըլլայ , միթէ չգիտէք որ ես ալ ազգատեցուծեան զոհ մի եմ . դուք գիտէք , որ ես թէ պէտ ուսումն եւ գիտութիւն չունիմ . բայց իբրեւ մարդ ընկեր եմ մարդկան , իբրեւ ազգ , անդամ եմ ազգին . քաղաքավարութիւն , սրտիաս չէ , լեզուախօսութիւն , քանի մը լեզուով կը խօսիմ , թէպէտ ոչ գրական կերպիւ . արհեստաւոր կ'ըսես , երկու ամենաքնտիր արհեստից տէր , այսու ամենաչնիւ ոչ պատիւ ունիմ եւ ոչ ասորուստ . ինձ նման մարդկային կենաց տիրոսնի արհեստաւոր մը այսօր երեսի վրայ մնացեր , ամեն ծոխութենէ եւ հաճոյքներէ զրկուեր , ամբողջ ընտանեօքս այսօրուան օրս թշուառութեան ահագնաբաց կոկորդին մօտ կեցած եմ , որ եթէ զօրաւոր շունչ մի եւս առնուէ կորուստս անշուշտ է : Հաղար տեղ փոխեցի , որ գուցէ կորուսած բազմա նորէն գտնամ , բայց ուր որ գացի բաղդէս հեռացայ , դուք ալ գիտէք Պ . Կորիւն , այնպէս չէ , լռէք կ'աղաչեմ խեղճութիւնս վերջին աստիճան հասած չէ :

Կորիւն . — Հատ լաւ գիտեմ , ինչ որ գիտեմ . բայց շարունակե խօսքդ եւ քաջութիւն , հիմայ դու խօսելու աւելի պէտք ունիս քան լսելու :

Հահայ . — Ո՛հ , ինչ խօսիմ , ազգատեաց են Հայերը , որ զիս չեն դործածեր . օտարին բուռը կը լեցնեն իրենց հարստութիւնը եւ իրենց ազգայինն :

րուն չեն նայիր . բայց ինչպէս որ կ'ըսեն թէ՛ Հայը վայ է , շատ իրաւ են , ինչու որ վայ է անշուշտ այն ազգին վախճանը երբ արհեստաւորները երեսի վրայ անօգնական կը թողու :

Ջարէկ . — Ո՛րք ես քարեկամ , ազգը մի թշնամաներ :

Կորիւն . — Թող որ խօսի ինչ որ կ'ուզէ , որպէս զի լսէ ինչ որ չուզէ :

Հահայ . — Ե՛րբ , ինչպէս չըսեմ , գիտե՞ս թէ ինչ սեւ փորձանքներ բերին գըլխուս այն սեւ գըլխները . ինձ նման զրկեալ եւ նենգեալ մի չը խօսի , հասցա՞նք պիտի խօսի :

Ջարէկ . — Ի՛նչ ներեցէք , դուք ընդհանուրը մասնաւորին հետ կը շփոթէք . դուք ազգի վրայ խօսած ատեննիդ բոլորովին մասնաւոր կը գտնամ նպատակնիդ , բայց ինչ եւ իցէ , այդ տրաւ մաքանութիւն չը գիտնալուդ է յանցանքը . բայց թէ որ ես գիտեմ , քու վիճակդ լաւ էր , ինչէ՞ն ատանկ եղար , չըլլայ թէ բոլորովին անծանօթ սրտածառներ ունենաս :

Հահայ . — Ի՛նչ որ իմ տունս քակող քանդողն անոնք եղան , անոնք :

Ջարէկ . — Հետաքրքրութիւնս կը շարժես , այդ մարդիկը ինչ կրնային ընել . քեզ , միթէ զքեզ կողպտեցին , չըլլայ որ ամուսնանդ զեղծեցին , կամ :

Հահայ . — Ո՛հ , ոչ , ոչ , այդ մասին բնաւ ըսելիք չունիմ , ամեն ամուսնաւորուկ ոսկիները գրպանս գնելով ես զիս ամիրայ մի կը կարծէի , շիտակը խօսելու է :

Ջարէկ . — Հապա անոնցմէ դժգոհելու պատճառդ ինչ է . իրաւ է որ ես ալ շատ համարում չունիմ կղերաց վրայ , բայց կը խօստովանիմ , որ չափազանց ինքնասիրութեամբս շատ անգամ զուր տեղը դատած եմ , չըլլայ որ դուն ալ այդպիսի սխալմունք մը ունենաս . այս ք-

սելով զանանք արդարացնել չեմ ուզեր, այլ թշուառութեանդ բռն պատճառքն հետազօտել կ'ուզեմ: քանզի այդ կերպով շատ անգամ լլկ պարծառութիւնս պարծառութիւն տրամաբանական սխալի մէջ կ'իյնանք: Հէ՛, ի՞նչ կ'ըսէք Պ. Կորիւն, ինչո՞ւ չէք խօսիր:

Կորիւն.— Երկու խօսողին մէկ լսող պէտք է, դուք խօսեցէք, ես կըտեսնեմ, որ երկուքնիդ ալ մեծ կարեւորութիւն ունիք խօսելու, սրտերնուդ ծանրութիւնը պարպելու թեթեւցնելու համար, ես ալ մտիկ կ'ընեմ, և եթէ հարկը պահանջէ, երկու խօսք ալ ես կ'ընեմ:

Շահապ.— Կարծեմ Պ. Կորիւն կղերայ վրայ խօսելնէս չախորժիր, բայց ի՞նչ ընեմ որ սիրտս այրած է. մինչեւ անգամ անոնց մէջ երկու հատիկ ամենալաւ, ընտիր, և սրտակից բարեկամներ ունէի, այս մօտերս զանանք ալ մերժեցի սաստիկ նախատակոծ ընելով:

Կորիւն.— Երբ սխալիս բարեկամ, ձեր խօսակցութիւնը ավարտ կամ անախորժ ընողն՝ այս ինչ կամ այն ինչ անձի վրայ ըլլալը չէ, այլ իրաւունքն ու անիրաւութիւնն է, և ես առաջադրած եմ չը խօսիր, մինչեւ ձեր խօսքին վախճանն առնուի, ապա թէ գիտցածս պիտի խօսիմ: Բայց դու Պ. Օլարեհի հարցման պատասխանէ, և շարունակեցէք խօսակցութիւննիդ. — չըլլայ թէ սխալած լինիք, ըսաւ Պ. Օլարեհ:

Շահապ.— Երբեք, շատ աղէկ գիտեմ, որ սխալած չեմ, վասն զի նորս զիս համոզեցին, տեղէս շարժեցին, ես ալ նոցա խոստմանց հաւատալով անտանելի նեղութեամբ և ծանր ծախքով տեղափոխեցայ հանդերձ ընտանեօք, տունով եւ կահկարասեօք, որչափ որ կեցայ այն տեղ. . . ամենայն աչալըջութեամբ աշխատեցայ, և վերջը, չգիտեմ ինչ սրտածառով ինձ ճամ:

բայ տուին. եկայ վերստին այս տեղ, յաճախորդներս ալ ինձ չեն մօտենար, տեղէ տեղ կը փոխուիմ, բայց մէկը զիս չի հարցնէր. ալ չեմ կրնար կազդուրուիլ, ես թափառական, ընտանիքս թշուառ, բարեկամներէս զրկուած, բարեկամութեացս քով երես չունիմ, քանզի ալ իրենց նուիրելու բան չունիմ, ասկէց աւելի ի՞նչ թշուառութիւն կրնայ ըլլալ. այն տեղ ունեցած երկու մտերիմ բարեկամներուս ալ գրեցի, որ զիս նորէն հոն տանին, նորս գրիս ալ չը պատասխանեցին, ես ալ սրտիս ցաւէն մերժողական անարգաբանութեամբ լեցուն նամակ մի գրեցի և զիրենք մերժեցի, և հիմա կողոպտուած մարդու կամ պարսլուած տան մը պէս ունայն և դատարկ կը մնամ առանց ինչ ըլլալ գիտնալու. արդ ըսէք նայիմ, Հայր վայ չէ՞. հայերն ազդատեաց չեն. այն բարեկամներս ալ երեսաբար բարեկամ չե՞ն, և միթէ սխալած եմ դատողութեանս մէջ, ո՞վ ըլլայ որ դիմանայ իմ այս վիճակիս:

Ջալեհ.— Երբաւի, անտանելի է ձեր այժմեան վիճակը, կարեկցութիւնս կը շարժէք, ես հիմա ձեր խօսքը չիպիտի դատիմ, ձեր դատողութեան ուղիղ կամ սխալ լինելը քննել ուրիշ խաղաղ ատենի կը թողուիմ, եթէ պէտք լինի, իսկ հիմա ստիպողական հարկէն բռնադատուած ձեզ օգտակար ըլլալու համար, կ'ուզեմ բարեկամութիւն մը ընել, յուսալով՝ որ կ'ընդունիք. անկեղծաբար կը խրատեմ զձեզ ու կը յորդարեմ, որ չի վհատիք, վհատութիւնն ու լքումը ամեն դուռ կը գոցէ. յոյսերնիդ բնաւ մարդու վրայ մի դնէք, Լստուած և աշխատութիւն, բոլոր յաջողութեանց գաղտնիքը այս երկու սիւղանց մէջ է. Զանա զայն դուրս հանել. աշխատէ հաւատարմութեամբ, և դորձերդ կարգադրէ խահմութիւն,

ծախքերդ չափաւորէ, և չնչին յոյսերով և հաճոյակատարութեամբ... Ըրած նուիրատուութիւններդ դադրեցուր, այն յիշած բարեկամութիւններդ զրկուիլդ բարեբաղդութիւն սեպէ, և թէ որ կ'ուզես երջանկանալ՝ զանոնք խալառ մտցիր, տեղ մը հաստատ կեցիր, հոգ չէ որ ժամանակ մը անգործ մնաս, այն անգործ մնացած ատենդ ընելիք ծախքերդ՝ տեղափոխելու համար ընել պարտաւորուած ունայն ծախուցդ սեպէ, և ժամանակ մի համբերէ, մինչեւ ծանօթ և յաճախորդ ունենաս. քիչով գոհ եղիր և սիրտդ զըւարթ սրահէ, այն ատեն պիտի տեսնաս, որ օր աւուր տալրուստդ կարգի կը մտնայ, առ այժմ այսչափ... :

Հակապ. — Հնորհակալ եմ. բայց ես կարծեցի թէ իրօք օգնութիւն մը պիտի ընես, չոր ու ցամաք խրատն լինչ ընեմ, թէ որ իմ վիճակիս վրայ սրտանց կը ցուլիս և կարեկցութեամբ բարիք մի ընել կ'ուզես, ազգասիրաբար հանէ քանի մը ոսկի շնորհք ըրէ. եթէ բռլորովին չես շնորհեր, գոնէ փոխ տուր :

Զարեհ. — Ներեցէք Պ. քիչ մը յառաջ իմ վիճակս ալ ձեզ յայտնեցի, և ես ձեզմէ նպատակ պիտի խնդրէի, մանաւանդ պիտի առաջարկէի որ մեր ընկերութեան բաժանորդ լինիս. բայց տեսնելով, որ քու վիճակդ ալ խեղճ է, չի համարձակեցայ, դուք եւս կարող էիք իմանալ, որ իմ կողմէս այդ նպատակն ընել անկարելի էր : Եւ իմ հազար պիտոյքներս ունիմ զորս հոգալու համար անբաւ դրամի կը կարօտիմ, դըրամական խնդիրը դարուս մէջ խիստ ծանր խնդիր մ'է, եղբայրն եղբորը տասը զուրուշ չի հաւատար, հետեալ բար այդ պահանջքդ ալ ապօրինի է :

Հակապ. — Իմ դժբաղդութիւններուս մէկն ալ այս է, որ միշտ սուտ բարեկամներու կը պատահիմ, որք օգնե-

լու տեղ սրտաւ պիտոյքեր կ'ընեն ինձ :

Զարեհ. — Չեմ զարմանար ձեր ըսածին, վասն զի աքաղաղն ալ մարդարտին յարգը չի ճանչնար, թէ որ դու լաւ խորհիս, իմ խրատներս քեզ համար մշտնջենաւոր ճոխութիւններ են, եթէ նիւթական նպատակ մը ընէի, քանի մը ժամէն, կամ շատ շատ քանի մը օրէն պիտի սպառէր. բայց թէ որ խըրատներուս հետեւիս՝ միշտ պիտի նըպատաւորիս, և ուրիշ անգամ ալ թէ որ խորհուրդի կամ խրատի պէտք ունենաս, կարող ես վատահոլութեամբ դիմել ինձ իբր քու անկեղծ բարեկամիդ :

Հակապ. — Խրատի կարօտ չեմ, դրամի կարօտ եմ. խրատս իմ ծոցս է, թէ որ ուրիշ ըսելիք ունիս, այն ըսէ :

Զարեհ. — Արախ եմ, որ խրատնիդ ծոցերնիդ է. եթէ ձեր ծոցն եղած խրատը օգտակար խրատ է, ապահով եղիք, որ աշխարհի դրամն ալ ծոցերնիդ է, աշխատեցէք ուրեմն զանոնք գործադրել, յաջողութիւն կը մտղթեմ :

Կրիւն. — Կարծեմ թէ վերջնապէս խօսքերնիդ լրացաւ :

Հակապ. — Եւ, վերջացաւ, բայց խիստ ապարդիւն վախճան ունեցաւ :

Զարեհ. — Խօսելու կարգը ձեզ եկաւ, մենք ալ պատրաստ եմք մտիկ ընելու :

Կրիւն. — Գիտէք անշուշտ, որ ես ձեր անցեալ ու ներկայ վիճակին լաւ տեղեկութիւն ունիմ, և կը վարմանամ թէ ինքնամոլութիւնը որչափ կը խանգարէ մարդուս իմացականութիւնը և կը թիւրի դատողութիւնը, այնչափ, մինչեւ տեսնել չիտար որ ձեր բուն արժէքը ճանցողն է ձեր ունկնդիրը, ատով կը ստիպէք զիս որ խօսիմ, այո՛ պիտի խօսիմ առանց որ և իցէ նկատման, և պիտի խօսիմ անաչառութեւ, այս պատճառաւ կանխաւ ձեր հաճութիւնը կ'ուզեմ, խնդրելով միանգա-

մայն, որ ոչ վրդովիք և ոչ ալ ինձմէ
վշտանաք, ըրածս ոչ հակառակութիւն
է և ոչ թշնամութիւն, այլ պարզ խօ-
սակցութիւն, և եթէ ըմբռնելու չափ
իմաստութիւն ունիք, կարող էք գիտ-
նալ թէ ըրածս մեծ բարեկամութիւն
է. խօսքերս կ'ուզէք ընդունեցէք
կ'ուզէք մի ընդունիք, միայն թէ մեր
բարեկամութեան թող չի դպչի:

Զարեհ. — Իրաւացի փաստերու վը-
րոյ հիմնեցէք խօսքերնիդ և չենք զայ-
րանար:

Շահապ. — Ըրդարութեան դէմ զայ-
րանալէն ի՞նչ օգուտ:

Կրիւն. — Եւայց դժբաղդաբար այն
պիտի դարի մը մէջ կ'ապրինք, որ ճըշ-
մարտութիւնը ծանր կուգայ լսելեաց,
և բազմաց զայրոյթ պատճառողը բուն
խիստ արդարութիւնն ու ճշմարտու-
թիւնն է, և ասոր համար է, որ ես
կանխաւ կըզգուշացնեմ զձեզ, որ դուք
այլ չի՛ն մանիք այն անմիտներուն, որ
միշտ կ'ուզեն իրենց կամաց հաճոյական
եղածը եւ իրենց անձնասիրութիւնը
շարժ խօսքեր միայն լսեն և զայնս մի-
այն իրաւունք, ճշմարտութիւն և ար-
դարութիւն կը համարին, զորս իրենց
մտաց համոծայն կը գտնեն. այս պատ-
ճառաւ է ահա, որ անվերջանալի վի-
ճաբանութիւնք, սիրոյ և բարեկամու-
թեան սառնութիւն, հակակրութիւն,
ատելութիւն, և ուրիշ շատ չարիքներ
տեղի կ'ունենան, ես այդ կերպ խօ-
սակցութիւնները կ'ատեմ, ինչու որ ա-
պարդիւն ըլլալէ զատ վնասակար ալ են:

Զարեհ. — Հարկաւ այդպէս է, ինձ
ալ ատելի են, ես միշտ ճշմարտու-
թիւնը լսել կը սիրեմ, թէ և բուն իսկ
ինձ դէմ եղած ըլլայ:

Շահապ. — Ճշմարտութիւնը ո՞վ չու-
ղեր լսել:

Կրիւն. — Ինքնամոլները կ'ատեն ճըշ-
մարտութիւնը, կամ ապաշտները կը

հերքեն ու կը հալածեն զայն, խաբեբայ,
կեղծաւոր և չարասիրտները կը ծած-
կեն զայն, և առհասարակ մոլիները կը
հալածեն, բայց ճշմարտութիւնը միշտ
անոնց ետեւէն կը շրջի զիրենք խա-
տառակելու համար:

Զարեհ. — Երբաւի այդպիսեաց յա-
տուկ է արդար ու ճշմարիտ խօսքերու
դէմ զայրոյթ բանեցնել. բայց մենք
սիրով պիտի լսենք:

(Շարունակութիւն)

ԱՆՀԻՄՆ ՏՐՏՈՒՆՔՆԵՐ

Ղրեթէ ագղային ամեն կարգի և
աստիճանի անհատներու համար առօ-
րեայ առած մ' եղած է, թէ՛ « Լ՛ղգին
գործերը երեսի վրայ մնացած են, աղ-
գին գործոց նայող և հակող չը կայ »:
Լ՛յս ատեսակ խօսքեր բարձրագոյն կար-
գի սրտշօնեայններէն, այսինքն ազգա-
յին երեսփոխաններէն սկսեալ ց յե-
տին անհատն ընդ միշտ կը յեղեղեն, և
համարեալ թէ իւրաքանչիւրն ևս զա-
նազան պատճառներ կը նշանակեն այս
առթիւ: Սմանք կ'ըսեն՝ որ աղջիկն ընդ-
հանուր անտարբերութիւնն է ազգա-
յին գործոց յետ մնալուն պատճառ,
ոմանք՝ թէ եկեղեցականք են, որք ի-
րենց պարտաւորութիւնքը չը ճանա-
չելով, կամ ճանաչելով և 'ի գործ չը
դնելով, այս վիճակին հասուցած են,
ոմանք՝ թէ ազգին մէջ կըթուլթեան և
դաստիարակութեան բարձի թողի լի-
նին է միակ առիթ. իսկ ոմանք՝ (մեծ
մասը) թէ արգի Պատրիարքին անքա-
ղաքագիտութիւնն և հակասահմանա-
դրական ընթացքն է պատճառ ազգա-
յին գործոց յետամնացութեան, և
վերջապէս շատերն ալ ուրիշ պատ-
ճառներ մէջ կը բերեն:

Մեր նպատակն չէ այստեղ մի առ մի իւրաքանչիւր առարկութեանց ինչ որժէք ունենալը ցուցնել կամ իրարմէ ինչ առաւելութիւն ունենալնին եւ այս ինչ կամ այն ինչ կուսակցութիւնը պարտաւել. այլ կ'ուզեմ հասկնալ և հասկցնել միանգամայն, թէ՛ ի՞նչ է իսկական պատճառը ազգային գործոց յետագիմութեան, առ ո՞ր պէտք է ուղղենք մեր տրտունջներն և որո՞ւ դէմ:

Նշմարիտ է՝ որ մասնաւոր ընտանեաց մը իւրաքանչիւր անդամ թէ՛ հոգաւոր լինի, թէ՛ հովիւ, թէ՛ վաճառական լինի և թէ՛ վարժապետ, նոյն ընտանեաց բարեւաւութեան, շինութեան և օգտի համար պաքտաւոր է աշխատիլ, տքնիլ և իւր քիրտն չը խնայել: Բնուիրաւունք չունի հովիւը հողագործին ասել՝ թէ դու միայն պարտաւոր ես ընտանեաց հոգսերն լցուցանել, բարեւաւութեան համար մտածել եւ խորհիլ և ոչ վարժապետը. վաճառականին ըսել, թէ պէտք է դու հոգսս ընտանեաց պէտքերն, ես այս մասին պարտաւոր չեմ և փոխադարձաբար, այլ իւրաքանչիւրն եւս իւր յատուկ պարտաւորութիւնն ունի: Հողագործը պէտք է իւր հողագործութեան արդիւնքն, հովիւն՝ հովութեան արդիւնքն, վաճառականն՝ վաճառականութեան եւ վարժապետն՝ վարժապետութեան արդիւնքն ընտանեաց չի նուութեան համար՝ նուիրել անխոր: Այսպէս և ընդհանուր ազգի մը, որ ընդարձակ գերդաստան մը ըսել է, մէն մի անհատ պարտաւոր է նոյն ազգին յառաջագիմութեան, բարգաւաճման և զարգացման համար աշխատիլ եւ քիրտն թափել անխնայ. ի հարկէ ամեն մարդկանց պարտաւորութիւն մի և նոյն չէ, այլ զանազան իրենց դրից և վիճակին նայելով: Կարելի չէ տգէտ մարդոց վրայ ուստեալ մարդոց պարտա-

ւորութիւն դնել և փոխադարձաբար, և ոչ յետին արուեստաւորէ մը ուսուցչական պաշտօն պահանջել:

Սակայն հարկ է գիտնալ, որ պարտաւորութեանց զանազանութիւնը, երբէք անտարբերութիւն չեն թաղրեր, հետեւաբար կարելի չէ ըսել՝ որ ազգին գործոց վրայ մտածել այս ինչին պարտաւորութիւնն է. կարելի չէ, որ տգէտ հասարակութիւնը ըսէ թէ, ես ազատ եմ ազգային գործոց հոգսերէն. վասն զի տեսանք որ ամեն մարդ ևս ազգին յառաջագիմութեան մէջ իւր յատուկ տեղն ունի: Այլ թէ մարդը գրաւէտ է, պարտաւոր է իւր հանձարն ու գրիչը նուիրել այս առթիւ. եթէ տըգէտ է՝ իւր քիրտն ու նիւթական աշխատանքն. եթէ՛ Կիւղեցական է, իրեն վերաբերեալ գործոց և պարտաւորութեանց մէջ չը թերանալ. եթէ հարուստ, գրամ չը խնայել: Չեմ սըխալիր՝ եթէ նոյն իսկ դպրոցի ուսանողն անդամ պարտաւորութիւն ունի ըսեմ ազգային յառաջագիմութեան համար առ այն բարի և բուռն զգացմունքներով սնուցանելու իւր սիրտն ու հոգին:

Արդ՝ քանի որ այսպէս է, քանի որ ամեն մարդ պարտաւորութիւն ունի, ուրեմն ի՞նչ են վերը յիշուած տըրտունջներն, որո՞ւ կ'ուղղուին և որո՞ւ համար են: Փոխանակ ըսելու թէ՛ այս ինչ կամ այն ինչ է պատճառ ազգային գործոց յետագիմութեան, ըստ իս աւելի ճիշդ և արդիւնաւոր կը լինի, երբ անձնիւր մարդ իւր անձն մատնանիլ ցուցնէ թէ՛ ես եմ պատճառ, ինձ պատկանեալ գործոց և պարտաւորութեանց մէջ թերանալով: Արդիւնաւոր կը լինի ասացի, վասն զի երբ մարդ մի անգամ խոստովանի իւր թերութիւնքը, այս խոստովանութեան բնական հետեւանքն է ջանալ ուրիշ անգամ ևս նոյն պակասութեան մէջ չը գտնուիլ:

Երբ այսպէս ամեն մարդ իւր անձին դէմ իրաւամբ տրտունջ բառնայ եւ իւր անձին պարտականութեան մասին նախանձախնդիր լինի, այն ժամանակ անշուշտ եմ, որ ազգային գործերը առանց յետ մնալու հսկայաբայլ կը յառաջեն, և թէ այն ժամանակ փոխանակ խօսող ազգ մը լինելու (ինչպէս ենք) գործօն ազգ մը կը լինինք։

Իբրեւ հետեւանք վերի լրուածներուն անշուշտ հասկցուեցաւ կարգ մը մարդկանց շարունակ կրկնած խօսքին ինչ արժէք ունենալը, թէ՛ «Պատրիարքին հակասահմանադրական ընթացքն է ազգային գործոց յետ մնալուն առիթ»։ Սակայն պահ մը իրաւացի սեպելով այս առարկութիւնը, տեսնենք թէ ի՞նչ հիման վրայ հիմնած են։ Ի՞նչ է Պատրիարքին պաշտօնը Սահմանադրութեան տրամադրութեանց նայելով, եթէ ոչ սահմանադրապէս կազմուած ժողովներու նախագահել և միանգամայն նոյն ժողովոյ որոշումներուն գործադիր հանդիսանալ։ Երբ քանի որ Պատրիարքը անկախ և ազատ չէ իւր գործառնութեան շրջանին մէջ, այլ կախումն ունի Վարչութենէն եւ ընդհանուր Ժողովէն, ինչպէս կարելի է հակասահմանադրական լինիլ իւր գործոց մէջ, վասն զի հակասահմանադրական լինիլ կը նշանակէ անկախ որ և է պաշտօնական մարմինէ հակառակ գործել Սահմանադրութեան տրամադրութեանց, և քանի որ ցարդ այդ տեսակ գործ մը չենք տեսած պատրիարքի ընթացից մէջ, ուրեմն ի՞նչ տարբերութիւն ունի ձերմակին սեւ ես ըսելէն՝ Պատրիարքին հակասահմանադրական ես ըսելը։

Եթէ արդի պատրիարքն ազգային Ժողովոյ որոշումներն ՚ի գործ դնելով՝ Սահմանադրութիւնը կ'տոնահարէ,

պէտք է ազատ խղճով ասել՝ որ նա իւր պաշտօնին պահանջած պարտաւորութիւնը կը կատարէ, ինչու որ նա սահմանադրութեամբ ընտրուած և նոյն ժողովոյ վրայ նախագահ և գործադիր կարգուած է։

Արեւմտեան Սահմանադրութիւն մը կայ, այն ոչ թէ պատրիարքի գործառնութեանց և ընթացիցը մէջ է, այլ ժողովներու որոշմանց մէջ։ Թերեւս այսպէս ասելու իրաւունք չունենայի, եթէ ցարդ գտնէ մի անգամ կամ Վարչութեան կողմէն եւ կամ Ենդհանուր ժողովոյ կողմէն Պատրիարքին ազգ եղած լինելը, թէ այս ինչ գործը մեր որոշման համեմատ չը գործադրեցիր, այլ ընդդէմ Սահմանադրութեան քու ուզածիդ պէս կատարեցիր։

Կործեմ նոյնպէս հասկցուեցաւ թէ այն անձինք, որք յանուն Սահմանադրութեան խօսելով՝ ուրիշներն հակասահմանադրական կը կոչեն, ինքզինքնին Սահմանադրութեան միակ պաշտպան ցուցնել կը ջանան, և որք այս տեսակ կեղծ ու պատիր միջոցներով ժողովրդականութիւն որսալ կ'ուզեն, այդ անձինքն ոչ սահմանադրութիւնը հասկըցած են և հետեւաբար ոչ սահմանադրականք, ոչ ժողովրդեան բարեկամ և ոչ նորա օգտին և բարւոյն նախանձախնդիր են։

Յանուն ճշմարտութեան կը հարցնեմ այն ամենուն, որք քիչ շատ տեղեկութիւն ունին նախորդ պատրիարքաց գործոց և արարմանց վրայ, թէ Սահմանադրութիւնը արդի պատրիարքի օրով աւելի կենդանացած է, թէ մեռած։ Այս պատրիարքի օրով այսպէս կանոնաւոր կերպով երեսփոխանական ժողով կազմուած, օրինաւոր եւ շարունակ նխաւեր ունեցած է։ Այլ հարցնեմ լուսաւոր և մարտիր խիղճ ու

նեցող ամեն մարդու, թէ այս՝ Սահմանադրութիւնը մահացնել կը նշանակէ թէ կենդանացնել. Սահմանադրութիւնը անգործութեան մատնել, թէ գործադրութեան մէջ դնել. սահմանադրական լինիլ, թէ հակասահմանադրական :

Ինչպէս վերն առացի, նոյնը հոս կը կրկնեմ, թէ այս տեսակ Ներքին գործերն են տւելի պատճառ չգրային գործոց յետ մնալուն, քան թէ ուրիշ բան. աւելի այս տեսակ գրապաշտ դաս մը մարդիկ են չգրին գործերն մթութեան և անգործադրութեան մէջ սպաննողներն, քան թէ Պատրիարքն և կամ ուրիշներն, վասն զի Հոգիւն է կենդանութիւն, քան Գիրն. Գործն Սահմանադրութիւն, քան Խօսքն :

Գ. Ս. Խ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Ռ. ՈՂԶՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն և վերջ, տես թիւ 31)

Չեմ տխուրացնում թէ քաժանիկն ի շարունակ, ի փոփոխական և յընդհանուր մեծամանակ մի. և յայնոսիկ որք պատճառին ի գրգռմանէ մարթոյ, ի բորբոքմանէ արեան, ի ծաղկէ, ի վարդախոտէ և ի հրատապ սալարաց :

Շարունակ ջերմն է այն որ երբեք ոչ թողու զհիւանդն, և յընթացս հիւանդութեան ոչ առաւելու և ոչ նուազի ի նշանն : Եւ այս տեսակ ջերմն բաժանի ի սաստիկ, ի յուշիկ և ի մահառիթ :

Ե

Սաստիկ ասի ջերմն, որոյ ընծացքն է երազ, և յուշիկ՝ որոյ ընծացքն է մեղմ. իսկ մահառիթ, յորժամ ցուցանէ կապաբազոյն կամ խաղաւարտաւոր բիծս ապականեալ դրութեան հիւթոյ :

Փոփոխական ջերմն այն է, որ ըստեպ յաւելու կամ նուազի, կամ սաստկանայ և կամ թուլանայ. բայց ոչ երբեք թողու՝ ցորչափ հիւանդութիւնն տեւէ :

Եւ ընդհատական ջերմն է այն որոյ հնար է երբեմն սաստկանալ, բայց ըստ փոփոխակի նշանացն յուսալի է ողջանալ հիւանդին : Արք փոյթ տանին առողջութեան, պարտին աւանայն զգուշութեամբ մտադիր լինել ճգանց բնութեան, որ հաստատեալ է ի մեզ այնպիսի միջոցս, որով հնար է մարդոյ ազատ մնալ ի պատճառաց ջերման կամ այլ հիւանդութեան. քանզի ի բնութեանէ մարմին մեր կաղմեալ է այնպիսի ձեւօք, որ ունի զբնական հակամիտութիւն ի բաց վարելոյ յինքնէն զմնասակարսն առողջութեան. որ և հասարակապէս կտտարի միզելով, քրտամէք, կարեօք որովայնի, մաքրութեամբ կրծոց, փսխմամբ կամ իւրեք արտաթորմամբ, որք են թուլթք, դաշտան, կանոնաւոր լուծումն, ծաղիկ, վարդախոտ, սալարք, և այլն :

Եւ ըստ այսմ ի սկսանիլ ջերման, և թէ փոյթ տարցի ճգանց բնութեան, այն տեւէ այն ընդ երկար, այլ ոչ մահացանէ. բայց յորժամ անփոյթ լիցի այնմ, անկասկած պատճառէ զմահ :

Օրական փորձիւ յայտնի է, զի որք ըմբռնին ի ցրտութենէ, անդէն ի յայտ գան նշանք ջերման. եթէ առժամայն հոգ տարցին սլահելով զինքեանս ջերմ, բնակելով մեղմ և լոյծ

18

հեղուկս , այսինքն՝ ջերմանում թէյ ,
կաթիլ , և այլն . դնելով զոտան 'ի ջերմ
ջուր , և ջանալով քրտնեցուցանել
զմարմինն , 'ի քանի ինչ ժամս իսպառ
աներեւութանան նշանք ջերմանս : Եւ
յորժամ ջերմն է յապականեալ տե
սակէ , բարեգոյն միջոց արգիլելոյ
զներգործութիւնն է փսխելն , որ եւ
թէ հարկաւորի , պարտէ կրկնել զայն :

Վիտուս մեր աստ ոչ է ճիշտ հե
տադոտութեամբ քննել զքնութիւն
և զանմիջական պատճառսն ջերմախ
տութեանց , միայն գիտեմք յաւէտ
նշանակել զդիւրիմաց նշանսն այնոցիկ
և ցուցանել զպատշաճ եղանակ վա
րելոյ ընդ հիւանդին 'ի մասին կերա
կրոց , ըմպելեաց , օդոյ , մաքրութեան
և այլն , 'ի զանազան աստիճանս սոյն
հիւանդութեանց :

Վրեթէ ամենայն ախտացեալք
ջերմամբ տանջին սաստիկ ծարաւով ,
և խնդրեն ըմպել զովարար ըմպելիս :
Վասն որոյ չէ պարտ բնաւ մերժել զայս
խնդիր . այլ հարկ է տալ նոցա ցուրտ
ջուր կամ զովարար հեղուկս ինչ . զի
չիք ինչ այնչափ յարմար 'ի նուազել
զջերմութիւնն , լուծանել զհիւթսն ,
խափանել զջրացաւութիւնսն , յա
ռաջ բերել զարտաշնչութիւն , ա
ռաւելուլ զորքանութիւն միջոյ , լոյծ
պահել զրորվայնն և պատճառել զա
մենայն առողջարար ներգործութիւնս
ընդ դէմ հրատապ և բորբոքեալ ջեր
ման , որպէս արդումն յաճախ ցուրտ
ջրոյ , թեթեւ բոխնդաջրոյ և կամ
այլ թոյլ և անչոր հեղուկս , յորոյ
ընտրելագոյնն է ցուրտ ջուրն , որ
ըստ կարի օգտէ , եթէ ստէպ ստէպ
տացի հիւանդին ըմպել քանի մի
ու մայս :

Չովարար հեղուկաց պիտանու
թիւն 'ի պահու ջերման անչափ է ,
զի անցուցանէ զսաստիկ պապակումն

լեղուին , զտոջորումն մորթոյն , զայրե
ցութիւն ջերմութեան և չիջուցա
նէ զծարաւ հիւանդին :

Իսպառմ եւն տեսակք զովարար
հեղուկաց , որք կարի հաճելի լինին
հիւանդին ըմպել 'ի սոյն հիւանդու
թեան . այսինքն՝ եփուած խմորնոց ,
թէյ խնձորի , հիւթ նարնջի , կամ
խժային հիւթք պատրաստեալ յաւ
մատոյ մարջ միլիս խոտոյ , 'ի կանե
փոյ , 'ի բողբոջէ լիմոնենոյ և յայլ
մեղմ դալարեաց . յատկապէս առա
ւել հաճոյ լիցի հիւանդին ըմպել , եւ
թէ խառնիցի յայնս հիւթ լիմոնի ,
կամ թթու նարնջոյ (թուրինջի) , որ
ոչ վնասէ երբէք :

Իսաստիկ ջերման յորժամ հիւան
դըն զգայ զճանձրութիւն , և ոչ ու
նիցի յօժարութիւն շարժելոյ , բար
ւոք է պահել զնա 'ի հանգստեան ,
և եթէ հնար է՝ յանկողնոյ . զի մնալով
նորա յանկողնոյ , մեղմանայ ջրացա
ւութիւնն , նուազի ուժգին շրջան
արեան . և բնութիւնն օգնէ հիւան
դին յաղթել սաստկութեան ջերմանն :

Իսպառմ անգամ անկողնին միայն
փարատէ զջերմն , եթէ 'ի նորոգ սկը
սանիլն փոյթ տարցի . բայց որ անփոյթ
կայ և հակառակէ այնմ , փոխանակ
փտարելոյ զայն , հաստատէ յինքեան
խորագոյնս , և առնէ վտանգաւոր
յոյժ :

Իպահու ջերման պարտ է հիւան
դին պահել զմիտս և զանձն ըստ կարի
հանգիստ , քանզի որ ինչ ամբոխէ զմի
տըս և անհանգիստառնէ զանձն , պատ
ճառէ մեծ վնաս հիւանդութեանն .
վասն որոյ մի բնաւ թոյլ տացի նմա
լսել կամ տեսանել ինչ , որոյ հնար ի
ցէ բառնալ զխաղաղութիւն մտացն
և առնել զնա անհանգիստ :

Ոչ է անպատշաճ , այլ առաւել
օգուտ հիւանդին , եթէ ունիցի նա

միշտ ընդ իւր ղերախուսիչ ընկերս , ուրախ առնել զսիրտ նորա միխթաբական բանիւք , և զբաղեցուցանէ ըզմիտս պէսպէս զուարճաբանութեամբ , որ առաւել քան զդեղ օգտամատոյց լինի նմա :

Աստացեալն ջերմամբ եթէ ունիցի սաստիկ յօժարութիւն ըմպելոյ , այլ ոչ բնաւ ախորժակ ուտելոյ , տմենեկին անպատշաճ է եւ վնասակար իսկ , եթէ ստիպեսցեն զնա ուտել զօրաւոր կամ սննդաւոր կերակուր ինչ . քանզի զօրաւոր կերակուրն փոխանակ տաճելոյ զնա , առաւել ճնշէ զընութիւնն և բուժանէ կամ յաւելլու զհիւանդութիւնն :

Օյի կերակուր այսպիսի հիւանդի սրտ է լինիլ կարի սակաւ , թեթեւ և դիւրամարս , այսինքն սագու , արարուտ , թան կաղմեալ 'ի հացէ , եփեալ խնձոր , սալոր , փոխինդ , և այլն :

Ի տնանկան յորժամ ըմբռնի որ յընտանեաց նոցին 'ի հիւանդութիւն ինչ , վաղէն առ հարուստ դրացիս իւրեանց խնդրել զդեղ . զինչ այլ ինչ գտանեն անդ , եթէ ոչ միայն զօրաւոր ըմպելիս , այսինքն գինի , օղի կամ այլ բորբոքիչ ըմպելիս , զոր տալով հիւանդին , եթէ հիւանդութիւնն է ջերմն , առաւել սաստկացուցանէ զայն , և եթէ այլ հիւանդութիւն իցէ , այսու եղանակաւ պատճառէ և զջերմն : Ոմանք եւս առ 'ի զօրացուցանել զսիրտ հիւանդին , տան նմա ուտել զքաղցրաւենիս կամ զանուշեղէնս . բայց չիք ինչ այնչափ վնասակար ուտելիք ջերմամբ ակտացելոյ , որչափ այսպիսի իրք . քանզի յոյժ դժուարամարս են , և ունին զօրութիւն թթուելոյ 'ի ստամոքսի , յորմէ սրտճառի մեծ վնաս հիւանդին :

Չիք ինչ առաւել օգտաւէտ և

հաճելի հիւանդին քան զզովարար օդ , որ ոչ միայն բառնայ զնորին տագնապ , այլ և հովացուցանէ զարիւնն , նորոգէ զզօրութիւնն , և յոյժ օգտէ հիւանդին : Իսպառլու հիւանդք 'ի կարօտութենէ զովարար օդոյ , յատկապէս 'ի ջերմախտութեան դընին 'ի խեղդամահ կացութեան . և այս սակաւ անթուէլի անմտութեան մարդկան , որք պնդեալ են 'ի թիւր կարծիս , թէ պարտ է հիւանդին հեռի պահել 'ի յօդոյ . վասնորոյ փակեն զնա 'ի սենեկի , և ոչ թոյլ տան մտանել 'ի սենեակին օդ երբէք . մինչ ընդհակառակն հարկ է խաղացուցանել 'ի սենեակ հիւանդին շարունակ օդ զովարար , որպէս զի պահեսցի նա միշտ չափաւորապէս հով , որ առաւել օգնէ հիւանդին քան զամենայն դեղս : Եւ ոչինչ այնչափ ապականէ զօդ սենեկի հիւանդին քան զամենայն դեղս , եւ վնասէ զնա որչափ բաղմութիւն մարդկան ժողովեալ 'ի նմին սենեկի . յորում 'ի շնչէն բազմաց , ոչ միայն ծանրանոյ եւ լինի անպատշաճ արտաշնչութեան , այլ և փոխի 'ի թունաւոր որակութիւն , զոր 'ի ներշնչել հիւանդին՝ առաւելլու վտանգն :

Ի սոյն հիւանդութեան յորժամ խտտութեալ է հիւանդն 'ի զօրութենէ և վհատեալ 'ի մտաց , ոչ միայն պարտ է զօրացուցանել զնա կաղդուրիչ և զովարար դեղովք , այլ և հարկ է 'ի կիր առնուլ զամենայն միջոցս , քաջալերել զնա և բառնալ զանհանգստութիւն մտացն : Իսպառլու որչափ յետնադոյն անմտութիւն է ոմանց , որոց տեսեալ զհիւանդն 'ի վտանգի , փոխանակ խրախուսելոյ ըզնա միխթաբական և քաջայոյս բանիւ , տան նմա մտաբերել զերկիւղ ահեղ դատաստանի և դատապարտութեան

մեզս, որով մեծ վնաս գործեն ան-
ձին նորին՝ քան օգուտ հոգւոյն :

Սովորութիւնն արիւն առնլոյ
ի ջերմաստութեան է կարի օգուտ,
յորժամ պատճառեալ է այն ի բոր-
բորմանէ արեան . բայց վնասակար է
յոյժ , յորժամ է այն յապականեալ
հիւթոյ . քանզի բառնայ զկարողու-
թիւն հիւանդին , և պատճառէ զայլ
վտանգաւոր հիւանդութիւնս :

Եւ նախնական և հասարակաց
սովորութիւնն ի բրանեցուցանել
զհիւանդն իսկոյն ի սկսանիւն ջերման ,
է կարի յաջող միջոց բժշկութեան
այսր հիւանդութեան , և թէ պատ-
ճառեալ է այն յարտաշնչութեան ար-
գելմանէ . որ և այսպէս կատարի :
Սոցէ հիւանդն յանկողին , գիցէ զուտ-
սըն և զսրունս ի ջերմ ջուր , և ըմ-
պեցէ ստէպ ջերմ ջուր փոխնդի ,
թոյլ թէյ և կամ խմօթիլ , անկասկած
բրանեցի , որով գոցէ մեծ օգուտ
հիւանդութեանն : Քանզի ջերմու-
թիւն անկողնոյ , զնել ոտից ի ջերմ
ջուր և ըմպել զթոյլ և ջերմաջերմ հե-
ղուկս , թողացուցանեն զջրացաւու-
թիւնն ներգործեալ մորթոյ , բանան
զծակտիսն մարմնոյ և յառաջ բերեն
զարտաշնչութիւն , որով և բազում
անգամ փարատի ջերմն :

Բայց բազումք փոխանակ զայս
օգտակար միջոց ի կիր արկանելոյ՝
կուտեն ի վերայ հիւանդին զծած-
կոցս և տան նմա ըմպել զջերմաբնոյթ
հեղուկս կամ զհամեմատութեան ինչ , ա-
սինքն եփուած կոճապղպեղի , դա-
րիսոնի , և այլն , որք առաւել բոր-
բորեն զարիւն հիւանդին և սաստկա-
ցուցանեն զջերմն , և բազում անգամ
պատճառ լինին խեղդամահ լինելոյ :

Համենայն ջերմաստութեան հարկ
է պատշաճ դիտողութեամբ մտադիր
լինիլ փափագանաց հիւանդին , քան

զի այն է ճիգն բնութեան , որ բա-
զում անգամ տայ հիւանդին յօժա-
րել յայնպիսի ինչ , որ խկտպէս օ-
գուտ է նմա : Սայդ է զի չէ պարտ
կատարել զհաճոյս հիւանդին , տալով
նմա ուտել զոր ինչ նորին տկար ա-
խորժակն ինդրէ . բայց և արժան է
կատարել զկամս նորա սակաւութ ,
զոր ինչ տենջանօք ցանկայ նա ու-
տելութէպէտ և չիցէ ինչ յարմար նորին
հիւանդութեանն . քանզի փորձիւ
գիտեմք , զի բազում անգամ այսպի-
սեօք միայն ողջացեալ ելին հիւանդք ,
և բազումք եւս ի կարօտութենէ այնու-
րիկ վճարեցին զկեանս :

Իսկ յորժամ հիւանդն ողջանայ ի
ջերմաստութենէ , պարտ է ամենայն
զգուշութեամբ հսկել ընդդէմ կրօն-
նութեան . քանզի բազումք կարծե-
լով զանձինս բոլորովին ողջացեալ ,
փութով մատչին ի գործ , ի ծանր
վատակ , ի ցրտութիւն և ի ջեր-
մութիւն , յանպատշաճ կերակուրս և
յրմպելիս , որով կամ կորուսանեն ըզ-
կեանս , և կամ գտանեն զայլ երկա-
րատեւ հիւանդութիւնս :

Եւ զի որովհետեւ ամենայն ախ-
տացեալք ջերմամբ զկնի առողջու-
թեանն դեռ զմարմինն ունին նուաղ ,
փափուկ և զիւրաջնասելի , վասն որոյ
ամենայն զգուշութեամբ պարտ է նու-
յա փոյթ տանիլ ամենայնի որ ինչ
հակառակ է նորին տկար բնութեան :

Արջափ չափաւոր կրթութիւն կամ
վատակ օգնէ սոյն հիւանդին , այնչափ
վնասէ , եթէ անդրքան զկարողութիւն
իւր իցէ այն , յորմէ պարտ է զգու-
շանալ : Կերակուր նորա՝ որպէս գրե-
ցաք ի վեր անդր , պարտ է լինիլ թե-
թեւ , զիւրամարս և սննդարար , զոր
կարէ առնուլ ստէպ , բայց սակաւ մի-
այն . քանզի յոյժ վնասակար է յա-
սրմ ժամանակի այնչափ ուտել , սրչափ

ստամոքս հիւանդին պահանջէ, կամ
զայն ինչ ուտել, զոր ասորժակ նո
րա ստիպէ, կամ որ դեռ չէ մաք
սեալ զառաջին ճաշն:

Ի վերջոյ, պարտ է արժան համա
րիմ ծանուցանել և զայս մի ինչ. զի
եթէ 'ի ջերմաստուծեան և եթէ
յայլ հիւանդութեան, մի որ իշխու
ցէ առնուլ 'ի համբուեալ դեղոց ան
տի, զորս ոմանք 'ի սուտանուէն բը
ժըշկաց 'ի յօգուտ անձանց հնարեալ
են վասն հարիւրաւոր տեսակ հի
ւանդութեանց և տարածեալ յամե
նայն տեղիս, որք են դեղահատք, փու
շի, ոգի, օշարակ, ջուր, օծանելիք
և այլն: Օ՛ր որպէս ծանուցաք 'ի վեր
անդր, չիք հիւանդութիւն որ չու
նիցի զիւր յատկացեալ պատճառ, և
ոչ պատճառ իրիք հիւանդութեան՝
որ չունիցի զիւր նշանն, և ամենայն
հմուտ բժիշկ նախ ցանկայ իմանալ
զպատճառ հիւանդութեան և այնու
զերեւելի նշանն, և ապա յարմարէ
զդեղ: Եւ այս սոսկի դեղք մարթին
'ի միոյ պատճառէ գոյացեալ հիւան
դութեան օգնել, այլ 'ի միւս պատ
ճառէ յառաջ եկեալ մի և նոյն տե
սակ հիւանդութեան՝ ոչ, վասն որոյ
բաղումք, որք անմոտութեամբ հե
տեւեալ են այսպիսի դեղոց, ոչ մի
օջն չահեալ են և ոչինչ, այլ և կորու
սեալ են զկեանս պէսպէս չարաչոր
ախտիւք որպէս 'ի ժամանակս մեր պա
տահեցաւ իսկ, զի քանիք ոմանք 'ի մե
րաղնէից յաճախեալ 'ի սոյնպիսի դեղո
րացս՝ կորուսին զկեանս ջրգողութիւն,
ծիւրական և կաթուածական ախտիւ:

Այնմիայն արդիւնաւոր և կարի օգ
տաւէտ դեղ ջերմաստուծեան, զոր
գտեալ են բժիշկք և առհասարակ
'ի կիր առնուէն 'ի սոյն հիւանդութեան,
և քաղեն իսկ օգուտ մեծ, է քոնիայն
(քընաքընա) զոր տան ամենայն տեսակ

ջերմաստուծեան, եթէ փոշին և եթէ
դեղահատն այնորիկ. զայս դեղ գի
շեր և ցերեկ կարգաւ յերկուս կամ
յերիս ժամս անգամ մի տան հիւան
դին 'ի միոյ մինչեւ ցերիս Գրէնս սու
անգամն, ըստ հասակի և ըստ կազ
մուածոյ հիւանդին:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ատանայէն եկած հետեւեալ նա
մակը ընթերցողաց ուշադրութեան
կը ներկայացնեմք:

... Սիս, որ գրեթէ մեր ազ
գի նկատմամբ Տրովադա մը դարձած
էր՝ մանաւանդ այս մօտ տարիներս, և
զանազան բանակառութեանց ու ա
ղէտից պատկեր եղած, այժմ ազգի և
վիճակայնոց համահաճ քուէարկու
թեամբ վերջապէս լուծուեցաւ իւր
մահատիպ կապանքներէն, և Աստուած
բարձրացուց զանի իւր ստորնութե
նէն, և յիշեալ սուրբ Աթոռը ունե
ցաւ վերջապէս իւր արժանաժառանգ
գահակալը Տ. Տ. Մկրտիչ Ա. Վե
հափառ Կաթողիկոսը. սակայն հանր
է արդեօք միայն կաթողիկոս մը ունե
նալով բաւականանալ, ո՛չ, ո՛չ. հանր
է արդեօք միայն Վանք ունիմք Սոյ
մէջ լսելով գոհ ըլլալ, դարձեալ ո՛չ:

Ազգիպտոսի բուրբերն ինչ անուէն
և վարկ որ կրնան բերել հին Ազգիպ
տացւոց, անշուշտ նոյն օգուտը պիտի
բերէ յիշեալ փառազորի Աթոռն մեր
Ազգին և Աղիկիոյ: Մէկը եթէ կար
ծէ Ազգին շահը լոկ քարի փայտի և
նիւթի մէջ գտնել, կը սխալի. սոսկ
Աթոռը այն օգուտը չի կրնար բե
րել զոր Ազգը կը յուսայ:

Անք, որ Ատանայի հարկւրաւոր ուխտաւորաց հետ եւ անձնանուէր ընկերութեան անդամներէն շատերը ականատես եղանք նոյն վանքին, չեմք կարող առանց արտասուեաց նկարադրել. մէկը՝ պարտի ականատես ըլլալ որպէս զի քաջ վերահասու ըլլայ վանքին նիւթական և բարոյական թշուառութեանց:

Թողումք Ղրիգոր Բ. Վ կայասիրի օրէն 'ի վեր Արիւնիւց կրած անտանելի թշուառութիւնը, որ օտար ձեռքերէ նիւթեցաւ, և եթէ պահ մի այս մօտերս տասնամեայ չըջանին վրայ ահ նարկ մի ձգեմք, այն ատեն ստուգիւ կը տեսնեմք, որ Աթուռի ողորմելի վիճակին սղոքնառիթը Ազգի մէջ եղող մերձաւոր ձեռքերն եղած են, որով այսօր Աթուռին միայն ստուերը մնացած է: Քանզի նոյն իսկ Սեցիք և համանուն վանքի միաբանութիւնը ըզվանքն իբրեւ զմի գոմ ոչխարաց նկատած են, և այն ոչ որպէս պարան է: Սիթէ անձնական շահն անգամ չէր պահանջեր, որ գէթ Սոյ համար Սոսոյ վանքը պահէին. պահած են այո՛, ինչպէս սովեալ կէտանին կը պահէ հօտ մը իւր. քաղցը յագեցնելու:

Այս օրուան օրս վանքը ճիշտ Անգղիայի մենարան մը դարձած է իւր դրիւք. բայց երանի՛ թէ գէթ արժանաւոր մենակեացներ ունենար: Ինչո՞ւ արդեօք Սեցին պահ մը իրար անցաւ, վասն զի քաջ նկատեց որ իւր դերը չը պիտի կրնայ կատարել, դերասաններն օգի 'ի բռն իբր օրհասական երեւեցան և այն օտար սրտորդաց թելադրութեամբ չըխելամոցին թէ օտարն միշտ է օտար:

Արդարեւ յիշեալ վանքի անեղ տեսքը մինչև այս միճակին հասնելովն հանդերձ, դարձեալ իւր խորհրդաւոր սրբութեամբն ու վաղեմի հսկայածե-

ւութեամբ զարմանք միանգամայն և արտմութիւն կ'ազդէ տեսնողներուն. այո՛, տեսնալ պէտք է Արիւնիւց մէջ մեր Աթա հարց ձեռագործները թէ և կիսակործան, և ապա ողջալ զանիկա և իբրեւ երկրորդական Հայրենիք նըկատել. . . . :

Արդ՝ Սրբալոյս միւռնի հանգէսը պատուելու փութացող ուխտաւորք յամենայն կուսէ եկած էին, այսինքն Տիգրանակերտէն, Սելիսիւնէն, Քարբերթէն, Ադեսիպէն, Կեսարիպէն, Ղազնիոյ, 'ի Հաճնոյ, Գերմանիկէն, Ազգէհիքէն, Ատանայէն և յալոց զանազան տեղեաց, և այսպէս Սուրբ Միւռնի օրհնութիւնը հինգ հազարէն աւելի ուխտաւորաց ներկայութեան կատարեցաւ 'ի Սայիա ինը առանց ճիկ մը հանելու, խաղաղ և վաշիւռչ կերպիւ: Կային ուխտաւորաց մէջ նաև շատ քահանայք, վարդապետք և մի քանի Արք-եպիսկոպոսք: Գարպոսական ողորմութիւնը հազիւ վաթսուհի հազարի հասաւ, քանզի Սոսոյ վանքը հիւր պատասխարելու համար հազիւ երեսնի չափ սենեակ ունի, իսկ մնացեալ երեսուցէն աւելին բոլորն ալ խաբխուլ և վիշտ են. ուռաի ժողովուրդն ստիպուեցաւ վրաններու մէջ և Սեցեոց տունները նստիլ, ահա այս պատճառու ոմանք իրենց ողորմութիւնը տալու զանց ըրին: Աւիւտաւորք ընդհանրապէս երկու բանէ փոքր մի նեղուեցան, մէկը սենեակներու, իսկ միւսը ջուրի համար, ինչու որ ջուրը հինգ կամ տասն բոպէի չափ հետի է վանքէն: Վանքը օրինաւոր հոգեատուն, հիւրընկալ և այլն և այլն չկայ, բայց ասկէ վերջը ըլլալու յոյս կայ Չունի նաև արդիւս միաբանութիւն. օրինաւոր մարդու խիստ կարօտ, կարօտ նաև դրամոյ. այս երկու նիւթական ու բարոյական կարտուրթեանց սրահա-

տութիւնը խորհրդանշան է ամեն բանի, վասն որոյ Վեհափառ Ս. Կաթողիկոսի ուշք գրաւող առ այժմ այս երկու կէտերն են, այսինքն օրինաւոր և բանիբուն միաբանութիւն և դրամ, որք ըստ ամենայնի նախնական և ամենակարեւորներն են, առանց որոց բարեկարգութիւն անհնարին է։ Աւստի այս մասին Ազգային Կեդրոնական Վարչութիւնը խորհելու եւ Վեհափառ Կաթողիկոսին աջակցելու կարի պարտաւոր է, վասն զի եթէ գործը միայն Ս. Կաթողիկոսին թողու, և սա եւս իւր յայտը վիճակայնոց, մեծապէս կը սխալին թէ Ազգ. Վարչութիւնը և թէ Ս. Կաթողիկոսը։ Ս. Եթուոյն վերանորոգման համար սատարը ոչ թէ Կիլիկիոյ վիճակային սահմանացմէջ, այլ սահմանէն դուրս բնութեւ հարկէ անշուշտ՝ եթէ Ազգ. Սոց վանուց վերանորոգութեան փափաքող է, ապա թէ ոչ՝ ի դուր է ամեն ջանք։ Եթէ միայն Տաճկաստանի Հայք անձնիւր մարդ մէկմէկ դահեկան վճարէ, յայտնի է որ Ս. Երուսաղէմ թէ պարտքէ կ'ազատի և թէ դարպասական ողորմութիւն սրահանջելէ, նայնպէս և Սոց վանուց համար մտածել հարկ է, քան զի եթէ այսպիսի մի ընդհանրական նըւէր անկորուստ եւ անցորէ հաւաքել հնար լինի, երկու վանքերն ալ խափառ կ'ազատին Աւիտաւորի ձեռք նայելէ, ինչպէս էին հին ատենները մեր վանքերուն շատերը։ Իսկ Ստեցւոց մասին եթէ կ'ուզէ մէկը գաղափար մը ունենալ, եթէ Երուսաղէմ գնացած է, թող Բեթղէհէմի հայերն ի միտ ածէ, թէ և անոնք շատեր հաշերէն գիտնալէ զատ մէկ երկու լեզու եւս կը խօսին, իսկ Ստեցիք մայրենի լեզունին անգամ չգիտեն, և քաղաքավարութեան նկատմամբ Ստեցիք Բեթղէհէմցոց քով նշանակութիւն

չունին. նստած տուններին ցած, տձեւ և անկանոն, ընդ ամենը 1200 տունի չափ, մանաւանդ փողոցներ ուաղտեղութիւնը և ժահահոտութիւնը կարի չափազանց է։

Իսկ ի վանքէն Սոց մէջ կայ երկու Եկեղեցի եւս, որոց մին փլած է, . . . : Եւս այս ամեն ուրախական և տրտմական աւարկաներով լի տեսարանը նկատելէ զինի ներհակ զգացումներով վարակուած դարձայ իմ ստաժ տօնասեղիս յԱտանայ . . . :

1872 Մայիս 18

Արամայ։

ԺԱՄԵՆԿԵԼՊԻՆԿԱՆՔ

Եմայտ 13ին Օգոստոսիառ Սուլթանին Վահակալութեան տարեդարձը կատարուեցաւ շքեղ հանդիսիւ, ուր բաց ի սովորական լուսավառութենէն կատարեցաւ նաեւ զինուորական կրթութիւն և հրախաղութիւններ, որուն հանդիսատեսս գրաւ նուեցան Կառավարի հրաւիրմամբ տեղւոյս Ս. Պատրիարքունք, Հիւսիսատար և ուրիշ նշանաւոր անձինք։

— Ս. Երուսաղէմ, որ մինչ ցարդ Դամասկոսի Կուսակալութե կը սրտկանէր, այժմ առանձին Կուսակալութեան փոխուեցաւ, որուն Կուսակալ որոշուած է Վ. Սիւրիէ փաշան, որուն մօտ օրերս կը սպասուի։

— Բաղսրիս մէջ մի հարուստ Հրէի գրամոց և այլ թանկագին գոհարեղէնաց արկղը գողցուեցաւ, բայց զինի

«սակաւ աւուրց ռոտիկանութեան ար-
թուն աչաքընութեամբ քողերը դրու-
նուեցան, որոց մէջ բաց ՚ի գիւղացի
Ֆէլլահներէն, կան նաեւ մի քանի նշա-
նաւոր և անյուսարի անձինք: Արդը
ամբողջ գտնուելով գողերէն մէկուն
գլխուն վերայ գրած՝ հանգիսաւոր կեր-
պիւ տարին տիրոջ տունը. իսկ գողե-
րը բանտարկուած են, բայց տակաւին
վերջնական դատաւճիւր տրուած չէ:

— Երբու ականաւոր Վաղղիացի
ճանապարհորդներ Ս. քաղաքս գալով
և իրարու հետ Փափի անխաղաղա-
նութեան վերայ վէճ բանալով և զե-
րար թշնամանելով, որոշեցին մենամար-
տութիւն սցս թշնամանաց վրէժը լու-
ծել. Վաղղիացւոց Հիւսպատոսի կող-
մէն արտօնութիւն տրուեցաւ մենա-
մարտութեան և վկայքն անգամ որո-
շուեցան. բայց քաղաքիս Կառալի-
ւիչը խմանալով առաջին առաւ՝ յայտ-
նելով, որ իւր երկրի օրէնքը չիներէր.
ուստի ստիպուեցան Ախալօքիս ճա-
նապարհորդել տարբեր շոգենաւե-
րով, և այն տեղ կատարել իրենց մե-
նամարտութեան գաղանական գործու-
ղութիւնը:

— Հոգեգալստեան օրը Յոյն Ս.
Վերեզմանի վերայ հանգիսաւոր պա-
տարագ ունենալով՝ նոյն օրը Վլատիք
եւս Ս. Վերեզմանին կից եղող իրենց
փոքրիկ մատուռը պատարագի սկսած
էին. Յոյն արգիլել ուղեցին Վլատոց
պատարագը, առանց լռելու նոյս
խնդրանաց և առանց զիջանելու սաս-
տիկ աղաչանաց. վերջապէս վաշտ մի
զօրք բերել տալով բռնի արգիլեցին,
որով ստիպուեցան Վլատիք անձայն և
աճապարանօք աւարտել:

— Մայիս 18 ին մինչդեռ Վատինք
Պիւա խաջի մատուռին մէջ Աւստրիաց
Կայսեր հանգուցեալ մօր հոգեհանգս-
տեան կարգը կը կատարէին, նոյն օրը

Յոյն ընդդէմ իրաւանց երկց ազգաց
սկսած էին Ս. Յարութեան տաճարի
մեծ դրան զինինքը նարդելէ: Վանիցս
իրենց լուր տրուեցաւ, որ թողուն,
բայց զանազան պատճառներով սկը-
սան գարձեալ շարունակել: Ի վերջոյ
Աւստրիաց և Վաղղիաց Հիւսպատոսներն
անձամբ եկան արգիլեցին, յայտնելով,
որ այսպիսի նորոգութիւն կամ երեք
ազգ (Հայք, Վատինք և Յոյնք) մի-
տին պէտք է ընեն և կամ (Օսմա
նեան Տէրութիւնը իւր կողմէն, եթէ
կամի, ուստի յոկամայից հնազան-
դելով դադրեցան Յոյնք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Ը Ո Ղ, Զ, Ո Ւ Թ Ե Ա Ն

ԱՇԽԱՏԱՐԵԱՅ

ԳԵՈՐԳ ԱԻԵՏԵԱՆ

ԶԱՔԱՐԵԱՆՑ

Սոյն օգտակար գիրքը, որ Հրնդ-
կատանէն ղրկուած էր մեզ, ՍԵՐՆԻ
մէջ մաս առ մաս հրատարակելէ նըդ-
կենի, այժմ ամբողջը ըրացեալ հատու-
րիկով մը կ'ընծայեմք Ազգին, վատահ-
լինելով, որ իւր առողջ սպահակ ընտիր
հրահանգներու պարունակութեամբ
ընդունելութիւն կը գտնէ:

Պիւն 5 Դաշիկան:

Յ ԼՆ Կ

Յ ՈՒՆԻՍ

Պատրարայ Վաղղիացւոյ աղօթք և խնդրուածք հիւ ւանդութիւնը ի բարին գործ դնելու համար .	121
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . — Տրամախօսութիւն .	129
Ընհիմն տրտուեցնելը .	134
ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ .	137
Թղթակցութիւն .	141
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ .	143
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԹԻՒՆ .	144

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն տալիս կը հրատարակուի 24 երեւե բաղկացեալ մէկուկէս
ուրիշ ածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Կէճիտիցէ : հանդերձ ճանապարհի
ծախքովը կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տեարակ առնել ուղղող : սէտք է ամեն մէկ տեարին չորս դա-
հեկան վճարել :